№ 11 (177) XVI ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak'
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ „ՁԵՌՔԸ"

Քաղաքական նոր ուրվականներ, նոր կոչեր։ Եւ այս անգամ մի նորակազմ մարմնի ձեռքով, որ կրում է „Ինքնապաշտպանութիւն" անունը և հիմնուած է—գէթ ինչպէս շրջաբերականն է ծանուցանում—Հիւսիսային Կովկասի, Դաղստանի և Անդրկովկասի մուսուլմանների ձեռքով։ Համայն մահմեդականութեան ուղղած իր կոչի մէջ՝ նա ասում է ահա թէ ինչ.

Դաշնակցութիւնը, որ ունի կազմակերպուած զօրք, զինուած նորագոյն սիստեմով, զէնքի պահեստներ, և նոյնիսկ թնդանօթներ, այժմ իրեն հպատակեցնելով մի կողմից հայերին, իսկ միւս կողմից Կովկասեան կառավարութիւնը, իր գլխաւոր նպատակն է շինել—ոչնչացնել կամ քշել մուսուլմաններին Կովկասեան սահմաններից, որպէսզի գրաւէ նրանց հողերը, և այդ անելուց յետոյ՝ ձեռք բերի Կովկասի հայերի համար ինքնավար—ազգային վարչութիւն։

Այդ եսամոլ և ցնորական „նպատակը" վերագրելով մի կազմակերպութեան, որ պատկառելի կեանք ունի իր յետև, թուրքերի քաղաքական նորածին ընկերութիւնը հետևեալ գրաւիչ և հեզահամբոյր խօսքերով է արտայայտում իր սեփական ձգտումներն ու տենչը.

Մենք բոլորովին մտադիր չենք ոտի տակ տալ որևէ ազգութեան օրինական իրաւունքը և ձեռնամուխ լինել նրա պատւին և ազատութեան։ Ոչ և դարձեալ ոչ։ Մեր կուսակցութեան գլխաւոր նպատակն է—հաստատել անկեղծ եղբայրութիւն և իրական միութիւն Կովկասեան տարբեր ժողովուրդների միջև, և եթէ Դաշնակցութիւնը՝ անկեղծօրէն և շիտակութեամբ կը պարզաբանի մեզ իր գործողութիւնների իսկական ծրագիրը, և եթէ այդ ծրագիրը չէ պարունակում այնպիսի կէտեր՝ որոնք կարող են խախտել Կովկասեան այլ և այլ ժողովուրդների ազատութիւնն ու անկախութիւնը—այդ դէպքում մենք միշտ պատրաստ ենք մեկնել նրան համերաշխութեան ձեռք։

Համերաշխութե՞ն ձեռք... Տասնվեց տարի է, ինչ Փանատիկոս լաւատեսութեամբ այդ ձեռքն ենք որոնում թուրքերի, բիւրգերի, ասորիների, յոյների, մակեդոնացիների մէջ, և այդ „համերաշխութիւնն" է եղել այն հմայիչ „քաղաքական համերգը", որ հայկական տանջագրութեան և յուսախաբութեան վշտալի ոգեներին բարձր է պահել կազմակերպութեան շարքերում մարտիկների տրամադրութիւնը, և հաւատ՝ դէպի ստրուկ-ժողովուրդների միաբան գործակցութիւնը գալիք օրերին...

Այդ բաղձալի գործակցութեան և համերաշխութեան խնդիրն է, որ անդադար եղել է կազմակերպութեան ղեկավար մարմինների գլխաւոր մտահոգութեան առարկան, և շատ տարօրինակ՝ եթէ չ'ասենք թերահաւատ ու նենգամիտ մտածողութեան նշան է ասել՝ „պարզաբանեցէք մեզ ձեր գործողութիւնների իսկական ծրագիրը", քանի որ այդ „ծրագիրը" 16 տարուց ի վեր հրապարակի վրայ է, շատ անգամ լուսաբանուած կեանքի մէջ, ընդհարումների ժամանակ, միջկուսակցային ժողովներում, բարեկամների ու հակառակորդների վիճաբանութեան ընթացքում։

—

Դեռ 1891 թուին, երբ նոր էր հիմնադրուած Դաշնակցութիւնը և երբ նոյնիսկ „Դրօշակը" լոյս չէր տեսել, կազմակերպութեան կողմից հրատարակած մի „Թռուցիկի" մէջ, նուիրուած սկսող քաղաքական պայքարին, մենք ասում էինք.

„Կռիւը սկսած է. կռիւ ազատութեան համար, կռիւ գոյութեան համար։ Մի կողմից դարերով տանջուած ժողովուրդը, միւս կողմից ոտից ցլուխ ապականուած, քայքայող թիւրք կառավարութիւնը"։

Եւ այդ կռիւը սկսեց, եղաւ և մնաց թիւրք կառավարութեան դէմ, չ'արատաւորելով յեղափոխական երկարատև մարտի ճակատը այնպիսի քայլերով և ծրագիրներով, որոնք կարող լինէին վնասել բախտակից ազգերի համերաշխութեան վեհ գործին։

Ապա կազմակերպութեան առաջին ընդհանուր ժողովը, գումարուած 1892 թուին, երբ հաստատեց Դաշնակցութեան ծրագիրը, իրրև հիմք ընդունեց հետևեալ որոշ տեսակէտը.

„Տարբեր ազգութիւնների և դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առջև։

„Դաշնակցութիւնը՝ ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար (քաղաքական և տնտեսական ազատութեան թիւրքաց Հայաստանի մէջ)՝ կազմակերպում է յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան դէմ անընդհատ և զօրեղ կռուի հետ՝ կռիւ պիտի մղեն նաև այն ընդհանուր

պայմանների դէմ, որոնցից նեղւում են թէ՛ հայ և թէ՛ օտար տարրերը—ասորի, թիւրք, քիւրդ, եզիդի և այլն.

Այդ 15 տարի առաջ էր, երբ դեռ գոյութիւն չունէր և ոչ մի թիւրք-գործող, որ ծպտուն հանէր համերաշխութեան մասին, երբ չը կային ոչ կաստեմունիի, ոչ Էրզրումի ցոյցերը—նախանշանները համերաշխ գործակցութեան, և երբ մեր շուրջը տիրում էր քաղաքական համատարած խաւար, հայերի դէմ ատամ կրճտեցնող թիւրք խուժանով և քիւրդ աշիրեթներով։

Անցան տարիներ։ Դաշնակցութիւնը բէէլ գործունէութեան ոտք դրեց այն երկրի մէջ, որտեղից „Ինքնապաշտպանութեան“ կարծիքով՝ „նա ուզում է քշել, ոչնչացնել մուսուլմաններին“, — Կովկասի մէջ։ Եւ ահա թէ ինչ է ասում „Կովկասեան գործունէութեան նախագիծը“ գրուած և հրատարակուած 1905 թւին.

Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի և կրօնական համայնքների, որոնք մտնում են Անդրկովկասեան ֆեդերասիօնի մէջ։

Դրանք, այդ որոշումներն ու ծրագիրները լոկ ֆրազներ չեն կամ գեղեցիկ խօսքեր միմիայն թղթի վրայ,—դրանք հրամայական արտայայտութիւն են յեղափոխական կազմակերպութեան և նրա հիմնադիրների խորը փիլիսոփայութեան, ծնունդ երկար տարիների մտաւոր երկունքի, այն զօրաւոր օղակը, որ կապել է և պիտի շաղկապէ բոլոր այն ոյժերը, որոնք հանդէս են եկել նուիրելու իրենց ուղեղը, իրենց աշխատանքը, իրենց կեանքն իսկ Փոքր-Ասիական և Կովկասեան ժողովուրդների քաղաքական և տնտեսական ազատագրութեան գործին։

Այդ „ծրագիրը“ կարմիր թելով անցել է մեր կազմակերպութեան բոլոր ձեռնարկների և մեր հրատարակութիւնների իւրաքանչիւր էջի մէջ։ Ամենաբծախնդիր հետազօտողն անգամ չի գտնի ոչ միայն „Դրօշակի“, մեր պաշտօնական կենտրօնական օրգանի, այլ նոյնիսկ դաշնակցական ամենաանշան հրատարակութեան մէջ մի յօդուած, մի էջ, մի հրաւէր՝ որ դաւաճանէր այդ սկզբունքին։ Կազմակերպութեան շրջանակից դուրս ևս, մեր ղեկավար մարմինները ամեն տեղ, թէ Երկրի մէջ, թէ Կովկաս և թէ Եւրոպա, արտաքին յարաբերութիւնների գործում տոկունութեամբ ձգտել են իրականացնել այդ համերաշխութիւնը.—կոնգրէսներ թիւրքերի, ռուսների, լեհացիների, վրացիների հետ. միացած գործողութիւններ թիւրքերի, քիւրդերի և ասորիների հետ, որոնց համար նոյնիսկ Երկրի մէջ մեր մարմինները չեն խնայել ոչ աշխատանք, ոչ մարդ և ոչ դրամ. օգնութիւն և պաշտպանութիւն թիւրք և քիւրդ ամբոխին ընդհարումների ժամանակ, որի կենդանի ապացոյցներն են Մուշի դաշտում, Վասպուրականի մէջ, և նորերս՝ Անդրկովկասում տեղի ունեցած բազմաթիւ փաստերը։ Անթիւ դիմումներ հարևան ժողովուրդների քաղաքական խմբերին և գործողներին՝ միասին ծրագրելու, միասին կուելու, միասին հարուածելու...

Եւ այդ բոլորը այն հիմնական, և եթէ կամենում էք՝ պարզ պատճառով, որ Դաշնակցութիւնը մի նեղազգայնական կուսակցութիւն չէ, որ ձգտում է վերականգնել Մեծ-Հայաստանը մինչև Բոստով-Դոնի վրայ, ինչպէս Գօլիցինեան տեսակէտն է պնդում, կամ քշել թիւրքերին վեց վիլայէթներից և թաթարներին Անդրկովկասից, ինչպէս Եըլդըզ-Քեօսքի պոլիտիկոսները կամ „Ինքնապաշտպանութեան“ շրջաբերականներն են հաւատացնում, այլ մի յեղափոխական կազմուածք, որ ունի յեղափոխական—սոցիալական մտածողութիւն և ձգտում է իր ժողովրդին մասնակից անել, հարևան ժողովուրդների հետ հաւասար կերպով, ազատ կեանքի այն բոլոր վայելքներին, որոնք կազմում են մարդու և քաղաքացու անխախտելի իրաւունքը, սրբագործուած գիտութեան և հասարակագիտութեան կողմից...

Սակայն, բացի ծրագրային տեսակէտից կայ և գործնական խնդիր։ Եւ Դաշնակցութիւնը, որ իր այսքան տարիների աշխատանքների մէջ մէկից աւելի անգամ ցոյց է տուել մոմենտը և կեանքի իրական պահանջները ըմբռնելու կարողութիւն, վերին աստիճանի միամիտ, նոյնիսկ մանկամիտ պիտի լինէր, որպէսզի երազէր ստեղծել զուտ հայկական քաղաքական միութիւն, ազգայնական անկախ մի մարմին այնպիսի երկրի մէջ, ուր հայը անբաժանելի կերպով խառնուած և կապված է թուրքի, վրացու, քիւրդի հետ, և ուր ազգագրական և քաղաքական պայմանները թոյլ չեն տալիս նոյնիսկ ոտից գլուխ շօվէն մտքերով տարուած ազգայիններին՝ օրօրուելու այդպիսի և՛ անիրական, և՛ անխելացի, և՛ անիրագործելի ցնորքներով...

Դա պարզ է՝ ինչպէս արևի լոյսը։

—

Եւ ահա, իրրև պատասխան, տարիներ շարունակ քարոզուած համերաշխութեան և հաւասարութեան, Մասիսի շուրջը գլուխ բարձրացրեց հայկական Մեծ կոտորածների Կրտսեր եղբայրը—Անդրկովկասեան եղեռնը, որ ծաղր էր Դաշնակցութեան ծրագրին, հեգնութիւն մեր քարոզներին, անխիղճ արհամարանք մեր ուղղութեան.

„Արևան և արտասուքի մէջ—ասում էր „Դրօշակը“ 1905-ին—դարձեալ մի անգամ հնչեց հայութեան կոչը. աղերսական հրաւէրներ ուղղեցին թիւրք հարևանութեան. խողխողուող կանայք ոճրագործների ոտներին փարած՝ յիշեցրին „միասին կերած հացը“. դրացին դրացու դռները բաղխեց,

անկիւն, միջամտութիւն, շնորհ խնդրեց — բայց դարձեալ անօգուտ։ Ոճրագործութիւնը մնաց անողոք, չարագործը՝ ամբարտաւան...

„Եւ յուսահատ, վիրաւոր, անօգնական հայութիւնը, համբերութիւնը հատած օրհասականի մռունչ արձակեց և կանգնեց թշնամու դիմաց։ Կոտորածը ընդհարման փոխարկուեց, խողխողումը՝ կռուի։ Ցների մէջ ռումբ պայթեց։ Հրացանների որոտը տիրեց շէն ու գիւղերին։ Ու հայն էլ սկսեց կոտորել... Մեղաւորը մենք չենք։ Մեղքը՝ վատ հարևանի վզին“։

Այո՛, մեղքը վատ հարևանների վզին, որոնք՝ աւրեան և արցունքի օրերին՝ բողոք չէր բարձրացրին, չափ չէր դրին խուժանի առջև, զգաստութեան հրաւէր չէր կարդացին՝ անարգ բիւրօկրատիայի դաւերին գերի դարձած մասսաներին։ Դրա փոխարէն թագաւորեց կրօնական մոլեռանդութիւնը, թալանի ծարաւը, արեան բնազդը։ Ու այդ քաղաքական ոճիրի օրերին էր, որ Գանձակում հնչեց թուրք պոլիտիկոս Խաս-Մամեդովի պատմական ճառը, դրացիական դաւաճանութեան այդ զաղիր փաստը.

„Ուս օֆիցերներ.—բացատրեցէք ձեր զինուորներին, որ մենք, թուրքերս, անբաւ զոհեր տալով, կռւում ենք ցարի թշնամիների՝ հայերի դէմ. սպանում, կոտորում, հալածում ենք նրանց՝ իբրև յեղափոխականների, և այդպիսով անկարող դարձնում՝ դիմադրաւելու ցարի զօրքերին։ Բացատրեցէք զինուորներին, որ եթէ հայկական գաւառներում թուրքեր չէր լինէին, այն ժամանակ հայերը, իբրև յեղափոխականներ և ցարի իշխանութեան դէմ կռուողներ, շատ աւելի ուժեղ կը լինէին, քան ռուս յեղափոխականները, քան միւս ըմբոստ ազգերը... Այդ մենք ենք, թուրքերս, որ գէլեցինք հայերին յեղափոխական գործից, նրանց ոտն ու ձեռքը կապեցինք և դարձրինք անկար, անզօր.. Դուք մեզ էք պարտական“...

Եւ, որ ամենակարևորն է, այդ ծանր վրդովեցուցիչ խօսքերը լոկ ա ն ձ ն ա կ ա ն զգացմունքների արտայայտութիւն չեն, այլ ձևակերպումը մի ամբողջ ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ ե ա ն, որ դաւանում են թիւրք բէգերը, աղալարները և պոլիտիկոսները, որոնք—ցաւ է ասել իրենց ոճրագործ ձեռքերի մէջ են պահում անգիտակից ամբոխի ղեկն ու սանձը, նրա կրքերի ու բռնկման խորհրդաւոր գաղտնիքը...

—

Սակայն մոռանանք անցեալը և չը դառնացնենք հայ-թրքական յարաբերութիւնների ներկայ խաղաղ մոմենտը՝ հին փաստերով, որոնք ողբալի են, և նոր մանրամասներով, որոնք ըմբոստեցուցիչ են և ամօթալի։ Մոռանանք ատելութեան օրերը և խօսենք համերաշխութեան, գործակցութեան, հին վէրքերը միացած ոյժերով դարմանելու մասին։

Ցարգա՞նք ազգերի համերաշխութեան։

Պատի՛ւ դժբախտների միութեան։

Եւ հէնց յանուն այդ գաղափարի է, ահա, որ կազմակերպութեան պաշտօնական օրգանում—ուր հպարտ անտարբերութեան են արժանանում դաշնակցութեան դէմ ուղղած շատ չարամտութիւններ և խրծբծանքներ—մենք կանգ առանք մուսուլման հարևանների „Ինքնապաշտպանութեան“ շրջաբերականի վրայ, բացատրելու „մեր գործողութիւնների իսկական ծրագիրը“ և ասելու անկեղծօրէն՝

„Տասնվեց տարի է մենք մեկնել ենք համերաշ-
„խութեան ձեռքը. այդ ձեռքը սեղմողներ քիչ են, բայց
„և այնպէս մենք սպասում ենք հաւատով, վստահ, ա-
„ներկբայ... Այժմ դուք պահանջում էք „մեր գործո-
„ղութիւնների իսկական ծրագիրը“, որպէսզի դուք էլ
„մեկնէք ձեր համերաշխութեան ձեռքը։ Ահա այդ ծ-
„րագիրը։ Քննեցէք, վերաքննեցէք և տուէք ձեր վճիռը“։

Մաքուր, անբիծ ձեռքեր... ձեզ ենք սպասում...

ՊԱՏՐԱՍՏ ԵՂԷՔ

(Ֆրանսերէն անտիպ ձեռագրից)

Հայ երիտասարդութեան։

Ձեր հաւատքը անսասան և հիանալի է։

Հայերը Բերլինի Դաշնագրով «ամբողջ Եւրոպայի պաշտպանեալներն էին»։ Եւ ամբողջ Եւրոպան զանոնք լքեց...

Անհրաժեշտ բարեռորոգումները—միջազգային իրաւունքի հանդիսաւոր ակտերով ուժի մտցուած—քսան ու հինգ տարիներէ ի վեր իրականացման կը սպասեն։ «Բ. Դուռը իր ծեռք առած միջոցներու մասին պարբերաբար պիտի հաղորդէ պետութիւններուն, որոնք պիտի հսկեն ընթացքներուն գործադրութեան վրայ»։ Այսպէս կը խօսի 1878-ի դաշնագիրը։

Որ Դուռը իր պարտականութիւնը չը կատարեր,—սա դիւրահասկանալի է, քանի որ նա իր խոստումներէն ոչ մին իրագործած է, եթէ չը հաշուենք իրեն յատուկ «միջոցները»—կոտորածներ, կամայականութիւններ, հազար ու մէկ կեղեքումներ և սարսափի ռեժիմ, որուն տակ կ'ապրի հայ ժողովուրդը։

Բայց որ պետութիւնները դրժեցին իրենց երդումը, ահա ասիկա պէտք է զարմացնէ բոլոր անոնք, որոնք քաղաքակրթած մեծ ազգերու կառավարութիւններու վրայ իրենց ամբողջ վստահութիւնը դեռ չեն կորսնցուցած։

Բերլինի կոնգրէսի մէջ երրորդներու օգտին մէկէ աւելի որոշումներ ընդունեցան։ Քանի մը խմբումներ—առանց միջազգային տեսակէտով տիտղոսաւոր ներկայացուցչի—կրցան յուսալ, որ հանդարտութեան և եղբայրութեան բարձր զգացումները իրենց դեսպանը պիտի լինին, ցնորք մը, որ այն ատենուան ամենահռչակաւոր իրաւաբաններն անգամ բաժանեցին։ Բայց ափսո՜ս, որ Եւրոպայէն կամովին ընդունուած այս պարտականութիւնները այն ատենէ ի վեր անտեսուած, ժխտուած և բռնաբարուած են։ Կա՞յ մէջտեղ ոսկիի և նիւթական շահերու խնդիր մը,—այն ատեն անմիջապէս կը սպառնան, զրահաւորներ կը գինեն և աշխարհի ծայրը բանակներ կը ղրկեն։ Իսկ, ընդհակառակը, զրկանքին և անիրաւութեան ոչ մի իրական

գործով չեն պատասխաներ։ Այսպիսի անհոգութեան ի՞նչ անուն պէտք է տալ, եթէ ոչ մեղսակցութիւն։

Այժմ պաշտօնական աշխարհին չէ որ կը դիմէք։ Այլևս դիւանական լեզուն չէ, որ ձեզ կը պատասխանէ։ Դուք շիտակ մարդկանց սրտին դիմած էք, և անոնք ձեզ կը պատասխանեն.—Եղբա՛յրներ, մի յուսահատիք։ Ինչ որ սկզբում քիչ ձայներ կ'ըսեն, քիչ յետոյ շատ ձայներ նոյնը կը կրկնեն։ Հասարակական կարծիքի ոյժը այսուհետև անհնշելի է. անիկա ձեզի հետ է։

Քաղաքականութիւնը բուռն շրջումներ և յանկարծական անակնկալներ ունի։ Պատրաստուեցէք. վաղուան հաւականութիւններուն արժանի ըլլէք դուք ձեզ։ Եւ անոնց իրականացման ամենալաւ միջոցը սա է։

Բրիւսել

ՊՕԼ ԷՐԻԷՐԱ

Պրոֆեսոր Բրիւսելի համալսարանի
Անդամ „Միջազգային իրաւունքի ինստիտուտի"։

ՏԱՆՋԱՆԿԱՐԸ

Նայեցէք այս պատկերին։

Ինքը տանջանքն է այդ, դարբնած Պոլիս, Տանտպետի արիւնոտ մատներով, որ մահ տարածեց կենսավայրերում, արիւն՝ յօղի տեղ, վիշտ՝ ժըպիտի փոխարէն։

Տունը չը մնաց չէն, ոչ էլ ապրուստ՝ հալալ։

Տունը համիդիէն քանդեց. ապրուստը աւազակը տարաւ։

Հաց չը կայ ուտելու. սերմացու՝ ցանելու։

Հացը ուժեղը խըլեց. սերմացուն՝ աշիրէթը լափեց։

Հող կայ՝ վարող չը կայ։ Որբեր հողարաւոր՝ պահող չը կայ։ Օջախը հանդած։ Գոմը դատարկ։

Արար՝ ատնատակ. արդարութիւնը՝ ատնակոխ։ Արիւն ու արցունք. դպրթ և փախ...

Վաթան չէ այն, այլ տանջարան։ Մարդ չէ նրա բնակիչը, այլ սուեր...

Բեժիմի հրէշ—ծնունդն է այդ. մահաշունչ տիրապետութիւնը Անէծքի, որ կոչվում է Համիդ, Նիզամ, Հեօքիւմաթ...

Նայեցէք այդ պատկերին։

Արդարութեան ուրուականն է այդ, տանջուած, ցնցոտիապատ, կիսամեռ...

Լաւ նայեցէ՞ք...

Ցասման ու ըմբոստացումի ազդանշանն է դա, ունձայն կոչը՝ վիրաւոր ազատութեան...

ԷՐԶՐՈՒՄԻ ՑՈՅՑԸ

I

ԿԱՐԻՆ, հոկտեմբերի 22

Գործադուլ է՞,—այդ լուրը մի քանի բոպէում անցաւ քաղաքի մի ծայրից մինչև միւսը։ Դա լոկ լուր չէր, այլ իրականութիւն։ Ահա խուժանը խռնուել է „Կիւրճի Գափուսի"-ի զինուորական պահականոցի առջև։ Լռութիւն է, բայց զայրոյթը կարդացւում է թիւրքերի դէմքին։

Ի՞նչ է պատճառը։ Գիշերը Պոլիս են աքսորել նախորդ գործադուլի վարիչներից մի քանիսին, որոնց մէջ է նաև Մուֆթին։ Անգթօրէն են վարուել նրանց հետ, անկողիններից են հանել նրանց՝ յանկարծ, առանց նախապէս լուր տալու։ Մի թիւրք պատմում էր. „Սէր-քոմիսէր, Ալայ պէյ և փոլիսներ անարգել են Մուֆթին, նրա բերանը թաշկինակ են կոխել, որ ձայն չը հանէ, շրթները մէքենայի մէջ են դրել. նրա աղջկան վիրաւորել են, կնոջ մազերից բռնել, փողոցը՝ ցեխերի մէջ շպրտել և իրեն մերկ կառք նստեցրել ու աքսորել։ Այդ տեսակ պատմութիւններ բերանից բերան էին անցնում և կրկնապատկում յուզմունքը...

Խուժանն անհամբեր սպասում է։ Ահա դպրոցների մի խումբ՝ որ փողոցներում պտտում է։ Դրանք մուսեթիկներ են. կոմիտէի անդամներին նիստի են հրաւիրում։ Նիստը տեղի է ունենում գաղտնի։ Ահա որոշումները։ Պէտք է շուտով բանտարկել նահանգապետին և ստիպել, որ աքսորեալներին յետ բերէ. սպանել Ալայ պէյին, Սէր-քոմիսէրին և այն փոլիսներին, որոնք Մուֆթիին չարչարել են, արշալոյսին խուժանի վրայ ատրճանակ են արձակել, երկաթ հոգի վիրաւորել և մի զինուոր սխալմամբ սպանել։

Ամբոխը մեծանում է։ Պահականոցը պաշտպանելու համար զինուորների մի նոր խումբ է գալիս։ Երկու կողմից էլ ոչինչ շարժում չէ նկատւում։ Խուժանը գիտէ, որ իր փնտռածները պահականոցն են ապաստանել։ Պէտք է փորձել ներս խուժել։ ասացին. զօրքը մի թեթև դիմադրութիւնից յետոյ՝ ճամբայ բացաւ։

Ահա Սէր-քոմիսէրը։ Դադաշները նրա թևերից բռնած դուրս են բերում. մի թիկնեղ մարդ է դա, ճերմակ կարճ մօրուքով. նա երկար չի սպասում իր պատժին,—ծանր հաստ փայտերն ելնում-իջնում են։ Նա ընկաւ անշունչ և գետինը ներկուեցաւ արիւնով։ Ամբոխը ծափահարում է. ուրախութեան աղաղակներ են լսւում։ Կոմիտէի անդամներից մին խուզարկում է նրա գրպանները և հանում է մի ցուցակ։ Դա աքսորեալների ցուցակն է. 60 անձի անուններ են գրուած։ Ամբոխն հայհոյում է...

Կարճ ժամանակից յետոյ դադաշները առաջ անցան և կանգ առան նահանգապետի տան առջև։ Այնտեղ էլ մեծ ամբոխ։ Զօրքը շրջապատել է նահանգապետի տունը. դադաշները վարանում են։ Բայց նորից փորձել հարկ է, և ահա ձեռնարկեցին, սկսեցին ներս խուժել։ Սկսուեց հրացանաձգութիւն. մէկ, երկու... տաս, քսան։ Դժուար է կացութիւնը։ Զինուորներն են կրակում, ամբոխը յետ է մղւում։ Բայց ահա նորից ոյժ առաւ նա և յարձակուեց, զինուորների շարքը ճեղքուեց։ Մի զինուոր ասել է. „ինչո՞ւ էք փախչում, հո մենք

ձեր վրայ չենք կրակում. չէ՞ք տեսնում, մեր գնդակներն օդն են ելնում“։

Ահա դադաշները չէնքից ներս են մտել։ Դուրսից տան ապակիներն են ջարդում։ Նահանգապետն՝ յանկարծակիի եկած՝ հարէմն է փախչում և գաղտնի դռնից մի ուրիշ տուն մտնում։ Խուժանն աղաղակում է. „Գաչտը, գաչտը“։ Յաղթական բոպէ է, զօրքն անտարբեր դիտում է... Դադաշները բռնեցին Նահանգապետին. արհամարում են նրան, ապտակում են. կըլխից արիւն է վազում։ Յաղթական թափօր է կազմւում, և Նահանգապետին մզկիթն են առաջնորդում։

Հատուցման գործը շարունակւում է։ Կէս օրւան մօտիկ՝ ամբոխը նորից պահականոցից ներս է խուժում. Սէր-քօմիսէրի տղան՝ երկրորդ քօմիսէրը, Թաքստոցից դուրս է բերւում չէնքի պատշգամբի վրայ և նորից սկսւում է պատիժը։ Ամբոխն ուզում է, որ վար շըպրտեն մարմինը։ Խնդրանքը կատարւում է և ամբոխը յօշոտում է նրա մարմինը...

Զայրացած ամբոխը Ալայ պէյն է ուզում, բայց չէ գտնում. նա լաւ է թագնւել։ Ահա տանիքների վրայ էլ մարդեր են ելնել, փնտռւում են. ահա մի նոր որս, բայց Ալայ պէյը չէ, մի փօլիս է դա. նորից գանակոծում են և նորից գետինը ներկւում է արիւնով։

Փողոցներում հանդարտութիւն է տիրում, ժողովրդի մէջ փօլիսներն ձիերով ման են գալիս և դիտում շուրջը։ Ժողովուրդը վստահ է, որ անկիւններում ոչինչ անկարգութիւն չէ լինելու։ Զարմանալի երևոյթ է սա. երկու անգամ է, որ գործադուլ է լինում, բայց ոչ մի անախորժ դէպք չէ պատահել ժողովրդի մէջ. հայերն և Թուրքերը միմեանց հետ եղբայրաբար են վարւում։

Խղճալի էր բանտարկեալ Նահանգապետը. մզկիթի մի անկիւնը, գլուխը փաթաթած՝ ծալապատիկ նստել է նա։ Դադաշները դրսից ասում են. „Վալի փաշա, եթէ աքսորեալները մինչև երեկոյ չը գան, քեզ էլ Սէր-քօմիսէրի պէս սատկեցնելու ենք“։ Խեղճը դողում էր... Նա արդէն հեռագրով իր հրամանը յետ էր առել։

Իրիկնապահին լուր է հասնում, թէ աքսորեալները պիտի դառնան։ Պատմում են, որ կօմիտէի կողմից ղրկւած ձիաւորները կէս ճանապարհին միացել են լաղերին, Աշ-Դալէի մօտերը մի կռիւ են մղել պահապան զօրքերի հետ, երկու կողմից էլ վիրաւորներ են ընկել և ի վերջոյ լաղերի քաջութիւնը յաղթանակել է։ Ահա երեկոյ է արդէն։ Քաղաքի դռան մօտ յաղթական թափօր է կազմւում և աքսորեալները կեցցէներով քաղաք են մտնում։ Մուֆթին ուրախ է, ժպտում է։ Օրհնում է ամենքին, դադաշներին և մոռացել է որ 18 ժամ առաջ իր շրթները մեքենայի մէջ էին դրել։ Նրան տուն են առաջնորդում. Վիրաւոր աղջիկն ուրախանում է։ Նահանգապետին ազատ են արձակում և նրա հարէմը մի քիչ հանգստանում է։ Արձակելիս Նահանգապետին ասել են. „Գնա՛, և էլ այսպէս մի՛ վարւիր“։

II

(Մի այլ աղբիւրից)

ՏՐԱԳԻԶՈՆ, հոկտեմբերի 2

Արտապնդիչ նոր փաստեր։

Ժամանակին մենք ձեզ տեղեկութիւններ տւինք այն ցոյցերու մասին, որոնք բանի մ՝ ամիս առաջ Թիւրքերու կողմէ երևցան Էրզրումի մէջ։ Այժմ դժգոհութեան երկրորդ ցոյցն է, որ Համիդի բռնակալութեան դէմ կը կազմակերպէ հմայկրօն տարրը։ Ահա թէ ինչպէս։

Պօլսի կառավարութիւնը՝ հետևելով իր ծանօթ սկզբունքին, մի առ ժամանակ զիջելուց յետոյ, յանկարծ հրահանգ կը խրկէ՝ 120 պարագլուխները այլ և այլ տեղեր աքսորել և այս կ՚ըլլայ առանց դատավարութեան։ Իբր սկզբնաւորութիւն, ասկէ 8—10 օր առաջ գիշեր մը, ոստիկանութիւնը կը մտնէ տասը տաճիկ երևելիներու տները և փնտրածներէն միայն հինգը գտնելով՝ գիշերանց անմիջապէս ճամբայ կը հանէ զանոնք։ Ասոնց մէջ էր նաև Մուֆթի էֆէնդին, իսլամի կրօնական պետը՝ ամբողջ վիլայէթին։ Հետևեալ առաւօտ, երբ Թիւրք ժողովուրդը եղելութիւնը կ՚իմանայ, իսկոյն կը խուժէ կուսակալին բնակարանը, ուրկէ զինքը քշելով կը տանեն մզկիթ մը և հոն սպառնալով իրեն, հեռագրել կուտան պէտք եղած տեղը, որպէսզի անմիջապէս ետ դարձնին տարագիրները։ Ցոյցը կատարեայ ըլլալու համար՝ ամբոխը իր պարագլուխներով կ՚երթայ դիմաւորելու աքսորեալները, զօրս առաք փառաք կը վերադարձնեն քաղաք։

Կարևոր է ըսել, որ երբ կուսակալը մզկիթ կը տանէին, մէկը մահակ մը կ՚իջեցնէ և կը պատռէ գլուխը։ Անդին կատաղի ամբոխը կը լուծէ իր վրէժը՝ մահակի ու կացինի հարուածներով սպանելով աւագ ոստիկանապետը և իր փօլիս որդին։ Նոր հասնող լուրերուն նայելով՝ կուսակալը և զինուորական հրամանատարը պաշտօնանկ եղած են և առժամաբար Կարին խրկւած է Բասենի բարձրագոյն սպան—Ահմէդ Աթա փաշան, մինչև Խարբերդի կուսակալին հասնելը, որ նշանակւած է նախկինին փոխարէն։ Աւելորդ է ըսելը, թէ ըստ Համիդեան ուղղութեան, երկու պաշտօնանկներն ալ քիչ ատենէն լաւագոյն պաշտօններու կը նշանակւին։

Զինուորական վարչութիւնը „մի քարով երկու թռչուն զարնելու“ նպատակով՝ հրացանաձգութեան փող հնչեցուցեր է, իբր թէ լուր առնելով՝ որ հայերը մզկիթը կոխեր են, սակայն Թիւրք երևելիները ողջմտութեամբ անմիջապէս զինուորական պաշտօնատուն վազելով, յայտներ են թէ մզկիթը հաւաքողներն իրենք Թիւրքերն են, հայկական բան չը կայ մէջտեղը և ասով նոր ընդհարման և Թալանի առջևը առած են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԴԱՒ ՈՐՈՆՈՂ ԴԱՒԱԴԻՐՆԵՐ

ԲԱՂԷՇ, հոկտեմբերի 10

Սեպտեմբերի սկիզբները Թիֆլիսի կուսակալ Փէրիդ բէյ պտոյտի ելաւ կուսակալութեան մէջ։—Երբ այս յիմար հրէշը՝ պտոյտի անուան տակ՝ դուրս կելլէ, անշուշտ պէտք է հասկնալ թէ դիւային ծրագիր մ՝ ունի գործադրելու։ Նախ Խիզան գնաց Ալայ-պէյ խըռֆած Իզզէթ փաշայի ընկերակցութեամբ. քանի մը օր վերջ Խիզանի հայաբնակ խնձորուտ գիւղը ամբողջապէս հրդեհից հետևեալ պարագաներու մէջ։—Վալին

լուր կ'առնէ, թէ այդ գիւղին մէջ ֆէդայիներ երևցեր են և թէ ոյժ կ'ամբարեն։ Ալայ-պէյը հոն կը ղրկի՝ երկու հարիւր ժանդարմներով՝ քննութիւն կատարելու։ Ալայ-պէյը՝ իբր թէ գիւղը ամայի գտած և բնակիչներու փոխարէն ընկուզենիի կոճղին մէջ վառօդ և գնդակ երևան հանած ըլլալուն, գիւղը կրակի կուտայ։ Հոն կը հասնի նաև Ֆէրիտ պէյը, արիւնի և աւերակներու մէջ փառք որոնող այդ հրէշը, կը կանչէ մօտակայ գիւղերու մեծամեծները և դիւային քմծիծաղով մը մատնանիշելով դեռ մխացող փլատակները՝ „ձեր գիւղերն ալ այս բախտին պիտի արժանանան, կ'ըսէ, եթէ վառօդի ու գնդակի դրամ տաք"։ Ահա այսպէս կ'աւրուի հայ գիւղ մը, մինչդեռ հրդեհին մասնակցող ոստիկաններէ ստուգուած է, որ կոճղին մէջ գտնուած վառօդն ու գնդակները հոն դրուած էին թիւրք պաշտօնեայի մը կողմէն՝ գիւղի հրդեհումն արդարացնելու համար։

Անցեալ ձմրան Կովկասէն այստեղ ապաստանող թաթար գաղթականները մաս առ մաս կը տեղաւորուին Պուլանըգի հայաշատ գիւղերու մէջ՝ իւրաքանչիւր գիւղի վրայ 30-էն մինչև 50 ընտանիք բաժին հանելով։ Երկու ամիս առաջ 30 ընտանիք հաստատուեցան Շէխեաղուպի մէջ, 50 ընտանիք Կօզակ։ Աւելի կամ պակաս չափով ընտանիքներ հաստատուեցան նոյնպէս հայաշատ Լիսի, Ատկոնի, Համզաշեխի, Թեղուտի, Ոանջուրի, Կարակի և ուրիշ երկու գիւղերու մէջ։ Բիթլիսի քաղաքապետութեան նախագահութեամբ յանձնախումբ մը կազմուած է՝ Մշոյ դաշտ նոր հասնող գաղթականներուն հայ գիւղերու մէջ նոր տեղեր պատրաստելու համար։ Եւ դիտմամբ կը փնտուին հայաշատ ու բարգաւաճ գիւղեր՝ հոն հաստատելու համար կովկասահայերու վրէժխնդրութեամբ թունաւորուած թաթարները։ Այլևս գաղտնիք մը չէ, թէ թիւրք կառավարութիւնը՝ հայ գիւղերը իսլամ արիւնկզակ տարրերով լեցնելու քաղաքականութիւնը ամենէն յաջող քայլերէն մին կը նկատէ՝ զանոնք հայերէն պարպելու համար։ Եւ այդպիսով իբր թէ հայերէն հալածուած թաթարները իրենց առջև կը գտնեն անպաշտպան ու անտէր հայերը։ Դիւրին է հասկնալ հետևանքը։

ՊԷՅՐՈՒԹ, 3 հոկտեմբեր

Հալէպի մէջ գտնուող քաղաքական բանտարկեալներէն 3 հոգիի մասին հէյեէթի իթհամիյէն (ամբաստանիչ ատեան) ճինայէթի եղեռնագատ ատեանի առաջ դատելուն որոշմանագիր արձակած էր։ Այս որոշմանագրի դէմ դիմում կը լինի Պօլսոյ վճռաբեկ ատեանին, բայց դեռ ոչ մի արդիւնքի չը հասաւ։ Բանտարկեալներ 10 ամսէ իվեր բանտ են առանց իրենց մեղապարտութիւնը ապացուցանող ոևէ փաստի։ Անոնց ընտանիքները շատ խեղճ ու թշուառ վիճակի մէջ են։

ՎԱՆ, 4 հոկտեմբեր

Ալջաւազի Քէօր Հիւսէյին փաշան ժամանակ մը մեկնած էր իր խմբերով արաբական ապստամբութիւնը զսպելու համար։ Այս վայրագ քիւրդին արժանի զաւակը իր հօր տեղը բռնեց։ Հօրը բացակայութեան՝ նա փախցրեց Արճրա գիւղացի Պետօի 10 եզը։ Իսկ համիդական փաշան չուշացաւ Հիճազէն վերադառնալ աւելի մեծ պատիւներով. հազիւ տանը շէմքին ոտք դրած՝ վերսկսեց իր աւազակութիւնները։ Կը լսէ, չը գիտենք ինչպէս, թէ երկու հայեր դաշտի մէջ հողի ամանով ոսկիի գանձ մը գտած են։ Առանց ստուգելու՝ երկու հայերը կանչել կուտայ, ձեռքերն ու ոտքերը կապել տալով կը գանակոծէ և ախոռը կը ձգէ, որպէսզի գանձը յանձնեն իրեն, որ ճանապարհորդական ծախսերու և տուած կաշառքներու տեղը գոցէ։ Ուրիշ մի դէպք։ Ոստիկանները վերջերս կը ձերբակալեն իբրև յեղափոխականի գիւղացի ճանապարհորդ երիտասարդ մը և կը յանձնեն հեծեալ ոստիկանի մը, որ տանի Ոստանի կառավարութեան յանձնէ։ Սիւվարին խեղճ տղուն հրացանի կոթով մեռնելու աստիճան կը ծեծէ. երբ գետի ափը կը հասնին, զափթիէն առաջ կ'անցնի ջուրին մէջ. հայ երիտասարդը կը հաւաքէ իր վերջին ուժերը և գետնէն քար մը վերցնելով՝ կը խփէ զաբթիյէի ծոծրակին։ Զաբթիյէն ձիէն վար կը գլորուի. երիտասարդը անմիջապէս կը վերցնէ անոր հրացանը և փամփուշտները, կը հեծնէ ձին և կը հեռանայ։ Մօտակայ հովիւները կը տեսնեն, հաւար կը ձգեն. տղան կը բռնուի, և այժմ կը գտնուի բանտը։

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, սահմանագլխից, 8 հոկտեմբեր

Ժողովրդի անհանգստութեան առարկան՝ քրդական ապստամբութիւններն են։ Դրանք պարբերաբար աւերում են Սալմաստի և Խոյի գաւառները։ Վերջերս յատկապէս զարդաղցիճիաւոր զինուորներ են ուղարկուած այնտեղ, բայց նրանց ներկայութիւնն էլ չի զսպում քիւրդերին։ Մի քանի ժամանակ առաջ մի ընդհարում տեղի ունեցաւ մօտակայ գիւղերից մէկի մօտ՝ քիւրդերի և պարսիկ ձիաւորների միջև. սպանուած են մի քիւրդ և երկու պարսիկ զինուոր։ Քիւրդերին յաջողուեց ձեռք բերած թալանը տանել հետները։ Այդպիսի կռիւներից և ընդհարումներից վնասուում է մասնաւորապէս պարսիկ ազգաբնակութիւնը։ Մինչև այժմ քիւրդերը ոչ մի հայաբնակ վայրի չեն մօտենում։ Ցաճախակի ասպատակութիւնների պատճառով բաւական ժամանակից ի վեր դադարել է փոստերի երթևեկութիւնը։ Ճանապարհորդները բոլորովին անապահով են. շատ անգամ հայ ճամբորդներին ուղեկցում են մեր զինուորները, որպէսզի կարելի լինի Ղանլի-Դարաներից—ուր սպասելիս են լինում սովորաբար քիւրդ ասպատակներ—ապահով ու անվտանգ անցնել։

ՏՐԱՊԻԶՈՆ, 22 հոկտեմբեր

Մէկ շաբաթ առաջ տեղոյս մզկիթները և թիւրքաց թաղերը գիշերանց տաճկերէն կոչեր ցրուեցին, որով թիւրք ժողովրդեան կ'իմացնէին սուլթան Համիդի հիւանդութեան ծանրութիւնը և ապօրինի կերպով չորրորդ զաւակին Պիւրհան-էդ-դինի իրեն յաջորդ կարգելու ջանքերը, և մի նոյն ատեն կը յանձնարարէին Բէշադ էֆէնդիի գահակալութեան ոյժ տալու պէտքը՝ իբր օրինական գահաժառանգի։ Այդ կոչի մէջ քրիստոնէից ալ կը հրաւիրէին մասնակցիլ իսլամ հայրենակիցներու ջանքերուն։ Խեղճ ժողովուրդ, որ կը կար-

ծէ թէ փոխանակ Պիւրհան-էդդինի կամ Համիդի եթէ Ռէշադ կամ Իւսուֆ Իզզէդդին գահակալեն, երկիրը պիտի փրկի կործանումէն։ Վէրքը որ կը փթեցրնէ երկրին ծուծը, թագաւորին անձին փոխելովը չէ որ պիտի բժշկի. կառավարութեան նորագոյն ձև մը միայն կրնայ փրկել դժբախտ երկիրը։

Այդ կոչերու առիթով ձերբակալեցան վաճառական Քէֆէլի զաղէ եղբայրներ, երևելիներէն Հաճի Ղանի էֆէնդիի որդին, որք իբր թէ պատի վրայ փակցուած կոչերէն հանդիպած ու կարդացած են։ Երկու թիւրք աղքատ կիներ ալ ձերբակալուած են. ասոնք ալ բամազանի առթիւ՝ գիշերը աղբիւրէն ջուր առած ժամանակին տեսած են եղեր մարդիկ, որոնք պատին վրայ բան մը կը կարդային... Ոստիկանութիւնը իր լրտեսներով թաթ ու կոթ կտրած է՝ թելի ծայր մը գտնելու համար... տեսնենք թէ որքա՞ն պիտի յաջողի։

Քանի մ՚ օր առաջ ալ Կիրասոնի գայմագամը իրադէով պաշտօնանկ եղաւ ժողովրդի բողոքին վրայ։ Կաշառակեր ու անպիտան անձ մ՚է։ Սպասենք նոր շարժումներու։

—

ԿԱՐԿԱՌ, 22 հոկտեմբեր

Վերջերս Թիֆլիսի նահանգապետ վալին մի խումբ զինուորներով եկաւ այս գաւառի Խնձորուտ գիւղը խուզարկելու՝ զէնք և ռազմամթերք գտնելու համար։ Ժողովուրդը վաղօրօք իմանալով վալիի այցելութեան լուրը և նկատի ունենալով տարիների դառն փորձը՝ այդ տեսակ հիւրերից կրած տառապանքները,—թողնում է գիւղը և ապաստանում լեռները. ինչ որ հընարաւոր է վերցնում են հետները և մնացած իրերը և շատ տներ կրակի են մատնում, որպէսզի կոպիտ զինուորներին աւար չը դառնան։ Այժմ ժողովուրդն իջել է լեռներից և մնացել իր աւերակների վրայ։

ԿՈՎԿԱՍ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐ ՊՐՕՎՕԿԱՑԻԱՆԵՐ

—

ԲԱԳՈՒ, հոկտեմբերի 12

Անցեալ տարի, օգոստոսեան աղէտներից առաջ և յետոյ, տեղական զինուորական հրամանատարը հայրենասիրութեան, պարտաճանաչութեան և դիսցիպլինայի կոչ էր անում զինուորներին։ Այդ կոչը այնքան համբաւ ստացաւ, որ հարիւրներով արտատպուած՝ շրջաբերւում էր ժողովրդի բոլոր խաւերում։ Կոչի ամբողջ բովանդակութիւնը՝ ի ս կ ա կ ա ն ռ ո ւ ս մ ա ր դ կ ա ն ց յատուկ մտքերն ու ֆրազներն էին՝ բայց մանաւանդ նշանաւոր էր նրանում շեշտուած այն պարզ ու որոշ ցուցմունքը, որը յայտնում էր իսկական ռուս մարդկանց, թէ Ռուսաստանի ներքին թշնամիներն են վ ր ա ց ի ն ե ր ը, հ ա յ ե ր ը և հ ր է ա ն ե ր ը, որոնք մոլորեցնում են նոյնիսկ ռուս արիւն ունեցողներից մի որոշ թիւ միամիտների, աւելացնելով՝ թէ զօրքը պարտաւոր էր չը հրապուրւելով նրանցից՝ կռիւ մղել այդ ներքին թշնամիների դէմ։ Ու այդ թոյնով, այդ կոչով սնած ու տոգորուածները եկել էին մորթոտուող, այրուող, թալանուող ժողովրդի կեանքին ու գոյքին պաշտպանութիւն ցոյց տալու։ Եւ տեսանք թէ ի՞նչպէս կատարեցին... դիակոյտներ, աւերակներ ու մոխիր սփռեցին. Այդ դեռ յեղափոխութեան՝ իբր թէ բռնկուած օրերումն էր։ Այս տարի, բէսկցիայի յաղթանակից յետոյ, Ռուսաստանի բոլոր կողմերում, ինչպէս և Բագուում, զինուորականութիւնը յայտարարեց թէ՝ ո՛րևէ պաշտօնեայի վրայ յարձակումն, սպանութեան փորձ կատարելիս՝ եթէ ամբոխը ոճրագործին չը բռնի, զօրքը ո՛չ թէ պիտի աշխատի ձերբակալել, այլ պիտի աշխատի պատժել բոլորին՝ առանց խնայելու տեղումը գտնուած ամբոխին, եթէ նա ժամանակին չէ թաղնուել, փախուստ չէ տուել։ Այդպէս կատարեցին և կատարում են, ոչ միայն փողոցում՝ այլ և իրենց բնակարաններում նստած կամ քնած և փողոցի անցքերից ոչինչ չիմացող ժողովրդի վրայ։ Ո՞վ պիտի ստուգէ, թէ իսկապէս այդ տեղերից հրազէն արձակո՞ւած է, և եթէ արձակուած է՝ ոստիկանական—պրովոկացիական ակտ չէ՞ եղել։ Ոստիկանական զեկուցագրերը ամեն մի ակներև իրողութիւն յեղաշրջելու բոլոր ոյժն ունեն։

„Վինտովկաներով“, սուիններով զինուած կօզակներ, զինուորներ, ոստիկաններ վխտում են հրապարակներում, փողոցներում նրանց աչքի առաջ ամեն օր կատարւում են բազմաթիւ սպանութիւններ, թալաններ, բայց որովհետև զոհերը ժողովրդից են,—ո՛չ մի ուշադրութիւն, ո՛չ մի պաշտպանութիւն։ Լրագիրները հրատարակում, մատնանիշ են անում թէ՝ ոստիկանութեան աչքի առաջ օր ու ցերեկով „իսկական ռուս մարդկանց“ յայտարարութիւններ են կպցուում պատերին, որոնք հրաւիրում են իրենց համակիրներին՝ սպանել, ջարդել, կոտորել, թալանել ներքին թշնամիներին,—դարձեալ ո՛չ մի ուշադրութիւն։ Եւ այդ ակներև քաջալերութեամբ հաւանական է որ իրագործւի „իսկական ռուս մարդկանց“ ցանկութիւնը։ Զը նայելով այդ բոլորին, գաղտնի հրահանգներ են տրւում՝ զինաթափ անել հասարակութեանը, մանաւանդ կազմակերպութիւններին, և մանաւանդ Դաշնակցութեանը,—ի հարկէ՝ բոլորովին անպաշտպան թողնելու համար ժողովրդին, և առանց արգելքի իրագործելու միապետականների ցանկութիւնները։

Այս մի քանի օր է, յամառ լուր է տարածւել, որ ոստիկանութիւնը կազմակերպում է ծպտուած ահաբեկիչների մի խումբ։ Ցաճախակի կրկնուող ահաբեկումները կասկածել են տալիս, որ արդէն սկսուած է գործը, որի գլխաւոր նպատակը պիտի լինի կուսակցութիւնների ղեկավարներին „քնացնել“։ Բազմաթիւ խուզարկութիւններ են կատարւում քաղաքում և շրջանի հանքային արւարձաններում։ Դրանցից մի քանիսը ապարդիւն անցան, բայց մի քանիսից բաւականին „պաշար“ են ձեռք բերել։ Եւ որովհետև խուզարկութիւնները կատարւել են այնպիսի ձևով, որ ակներև ցոյց են տալիս թէ թաքստանոց - պահեստները ճիշտ ու ճիշտ նկարագրութեամբ գիտեն, շատերը եզրակացնում են, թէ մատնութիւնը հէնց ներսիցն է։ Ցեղափոխութեան տականքները օրւայ հերոսներ լինելու փառքին են հասնում...

Շուշու և առհասարակ Ղարաբաղի շրջանում բազմաթիւ զօրք են տեղաւորում, և որպէս գաղտնիք կառավարական շրջաններից՝ լուր են տարածում, թէ

„Թուրք-պարսկական սահմաններից յարձակումների վախ լինելու պատճառով, քաղաքական ապագայի բարդութիւններ սպասելով, նախազգուշութեան համար՝ Շուշու գծով զօրքը կեդրոնացնում են սահմանի վրայ“: Բայց այդ պատրուակը մեզ չափազանց կասկածելի է թւում, որովհետև Թրքական կամ պարսկական սահմաններից յարձակման ո՛չ մի հաւանականութիւն չը կայ այժմ: Աւելի շուտ պիտի ենթադրել, որ կառավարութիւնը պատրաստւում է Շուշու և Գանձակի գաւառներում հայկական ինքնապաշտպանութեան յանդգնութիւնը պատժել, որպէ՞ս թէ քիչ էր մինչև այսօր պատժածը...

Խուզարկութեան միջոցին, որևէ մէկի մօտ զէնք գտնելու պատճառով՝ ձերբակալւածներին շարունակում են, առանց դատաստանի, գիշերանց գնդակահարել: Այս գիշեր երկուսին ևս գնդակահարեցին:

Պաշտօնապէս յայտարարում են՝ թէ 21 անարխիստներ են ձերբակալել, թէև „անարխիստ“ դիմակի տակ՝ հասարակական տականքները շարունակում են իրենց սխրագործութիւնները: Դիտակ շրջաններում ասում են, որ բռնւածները կամ ս. դ.-ներից են և կամ ո՛չ մի կուսակցութեան չը պատկանող:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

V

ԿԱԴԵՏՆԵՐԸ *

Պետական դումայի ընտրութիւններից քիչ առաջ՝ նրանք իրենց անուանեցին „ժողովրդական ազատութեան“ կուսակցութիւն, մի անորոշ ու տարտամ անուն, որ սակայն շատ յարմար էր նախընտրական ագիտացիայի ժամանակ: Դրանից առաջ, նախ քան հոծ և կազմակերպւած կուսակցութիւն դառնալը, նրանք կազմեցին Պ. Ստրուվէի խմբագրութեամբ հրատարակւող „Օսվոբոժդենիե“ (Ազատագրում) ՝ՀՇ-ԼԵԳԱԼ լրագրի: Իսկ դումայի մէջ նրանք կազմում էին ընդդիմադիր կենդրոնը, որ իր հերթին ունէր աջ ու ձախ թեւեր:

Իրենց սոցիալական դրութեամբ,—նրանք, կադետները ներկայացնում էին հողատէր և քաղքենի, մասամբ նաև արտադասակարգային մտաւորականութիւնը, որոնք կարողացան իրենց կողմը գրաւել ժողովրդական ընտրողների այն շերտերը, որոնց դասակարգային գիտակցութիւնը դեռ լիովին չէր որոշւած և որոնք բնազդաբար դեռ փարում են միապետութեան և անհատական սեփականութեան սկզբունքներին: Իրենց զբաղմունքով՝ նրանք մեծ մասամբ դաւառական ու քաղաքային գործիչներ են՝ և ներկայացուցիչներ ազատ պրոֆեսիոնների—փաստաբաններ, ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ, պրոֆեսորներ, գիտնականներ և դրողներ,—ազատամիտ աստիճանաւորներ և բանտիէներ, եթէ միայն կարելի է ընդունել մի այնպիսի ինքնօրինակ „զբաղում“, ինչպիսին է՝ „բանտիէն“: Իսկ քաղաքական հայեացքներով՝ նրանք կողմնակիցներ են սահմանափակ միապետութեան, պարլամենտարիզմի, կուլտուրական ինքնութեան և խաղաղ ու օրինական պայքարի՝ ինքնակալութեան ու բիւրօկրատիայի դէմ, յանուն Ռուսաստանի արտաքին վերանորոգման:

Հակադրելով իրենց՝ ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնների „բոմանիզմին“ և „ուտոպիզմին“—կադետները միաժամանակ համարում են իրենց „բէալ քաղաքականութեան“ իսկական ներկայացուցիչներ և կամենում են դրանով ասել, որ նրանք հաշուի են առնում ժամանակակից, արդի կեանքի բոլոր իրական կողմերը, ուսում և ձգտում են իրականացնել լոկ այն տեսակ բարենորոգումներ, որ թելադրում է ինքը կեանքը և որոնք յենարան ու արդարացում են գտնում հասարակական ուժերի բէէլ յարաբերութեան մէջ: „Ձը պէտք է չափից անցնել՝ թէ չէ բանի չենք հասնի“—այդ է նրանց ճառերի ընդհանուր միտքը: Կարելի է համարձակ ասել, որ կադետների շարքերումն են ռուս հասարակութեան և ժողովրդի այն բոլոր տարրերը, որոնք յայտնապէս թշնամական դիրք բռնելով հին կարգերի դէմ—չը կամենալ կամ չը համարձակուելով յարել ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւններին—սոցիալ-դեմոկրատներին և սոցիալիստ-յեղափոխականներին: Այս բացասական նշանը, սակայն, դեռ որոշ դաղափար չի տալիս սահմանադրական ռամկավարների հասարակական տեսակէտների, քաղաքական ծրագրի և տաքտիկի մասին: Ուստի հարկաւոր է փորձել՝ աւելի մանրամասն ու ճշդրիտ կերպով բնորոշելու նրանց հասարակական աշխարհայեացքը և քաղաքական գործունէութիւնը:

Նախ և առաջ մենք հրաժարւում ենք մեր բոլոր կադետներին en bloc ազատամիտ համարել, բառի եւրոպական իմաստով: Եւրոպական ազատամիտը ներկայացուցիչ է դասակարգային, այն էլ՝ բուրժուական, շահերի: Եւ իբրև այդպիսին՝ նա միշտ հակառակ է եղել և հակառակ կը լինի բոլոր քաղաքական, սոցիալական և մանաւանդ տնտեսական լայն բարենորոգումներին, որոնց նպատակն է բարելաւել աշխատաւոր դասակարգերի վիճակը. եւրոպական ազատամիտը, չը նայած իր բոլոր շքեղ ու հոյակապ ճառերին, նւիրւած „մարդու և քաղաքացու անկապտելի իրաւունքներին“, մէկից աւելի անդամ իր սեփական շահերին զոհ է բերել աշխատաւոր դասակարգերի շահերը և դրա համար էլ՝ իրաւամբ արժանացել է խաբեբայ և դաւաճան անուան: Ռուսական կադետների մեծագոյն մասը հեռու է ժողովրդի շահերը մտանելուց և դաւաճանելուց: Սրան զրաւական կարող են լինել, նախ՝ սահմանադրական—ռամկավար կուսակցութեան ծրագիրը, երկրորդ՝ նրանց վարմունքը,—սակաւ բացառութեամբ,—պետական դումայում և վերջապէս՝ այդ կուսակցութեան մի քանի ղեկավարների փայլուն վարկը.—չը պէտք է մոռանալ, որ այդ կուսակցութեան կորիզը կազմում են շատ յարգելի հասարակական դործիչներ, որոնք բաւական ծառայութիւն են մատուցել ժողովրդին՝ դաւառական ու քաղաքային ինքնավարութեան շրջանում, ինչպէս նաև փաստաբանութեան, ժողովրդական լուսաւորութեան, դիտութեան և դրականութեան ասպարէզներում. չը պէտք է մոռանալ նաև, որ կուսակցութեան ղեկավարները խոշոր խելքի, խոշոր դիտելիքների և պահանջկոտ խղճի տէր մարդիկ են: Այս ամենը յիշատակելով, մենք ամենևին մտադիր չենք դովերգներ ասել մեր կադետներին. մենք միայն ցանկանում ենք, որքան հնարաւոր է՝ անկողմնակալ լինել, մենք կամենում ենք պարզապէս անաչառ լինել: Որքան էլ կադետների հասարակական-փիլիսոփայական աշխարհայեացքը չը դիմանայ խիստ քննադատութեան, որքան էլ նրանց քաղաքական ծրագիրը կիսատպռատ լինի, որքան էլ նրանց տաքտիկը չափաւորութեան, անհաւասարակշռութեան, տատանման ու երբեմն նոյն իսկ օպպորտունիզմի կնիք կրի, բայց և այնպէս այս ամենը չի խանգարում „տալ Հարկս Հարկաւորաց“ և համարձակ ասել.—կադետները PUR SANG բուրժուազիայի իդեօլոգներ չեն. կադետները ժողովուրդը մատնող ու դաւաճանող չեն. նրանք շատ դէպքերում պաշտպանեն ժողովրդական շահերի, թէև երբեմն ճշտօրէն չեն ըմբռնում և ճիշտ չեն լուսաբանում այդ շահերը:

Դիմենք ուրեմն նրանց ծրագրին, որ մշակել են ռուս

* Տես „Դրօշակ“ № 10.

ազատարար շարժման յիշատակելի օրերին, 1905 թուի հոկտեմբերի 12—18-ին։

Սահմանադրական ռամկավարները կամ կադետները* նախ և առաջ ռամկավարներ են. և այս բառը նրանց բերանում, հարկաւ, սին հնչիւն չէ, նրանք համոզուած պաշտպաններ են լայն, ռամկավարական վերակազմութեան՝ իրաւական յարաբերութիւնների շրջանում, պետութեան ֆինանսական անտեսական քաղաքականութեան ոլորտում՝ հողային և բանւորական օրէնսդրութեան, ինչպէս նաև ժողովրդական լուսաւորութեան հարցերում։ Նրանք պահանջում են՝ քաղաքացիական հիմնական ազատութիւնների անմիջական և ըստ կարելոյն կատարեալ իրականացումն,—խղճի, խօսքի, մամուլի, ժողովների, միութիւնների, ընկերակցութիւնների և պահանջագրերի (պետիցիա) ազատութիւն. ազգերի ինքնորոշման ազատութիւն. ապատութիւն տեղափոխութեան. անձի, բնակարանի և թղթակցութեան անձեռնմխելիութիւն, և այս ամենը՝ բոլոր ռուս քաղաքացիների համար, առանց սեռի խտրութեան, անկախ նրանց դասակարգային և ազգային կացութիւնից։ „Քաղաքացիների վերոյիշեալ բոլոր իրաւունքներ,—ասուած է կադետների ծրագրում—պէտք է մտնեն ռուս պետութեան հիմնական օրէնքի մէջ և ապահովւին դատարանական պաշտպանութեամբ“։ Ռուս պետութեան նոյն հիմնական օրէնքը պէտք է, նրանց կարծիքով, „ապահովէ կայսրութեան մէջ բնակւող բոլոր ազգերի համար՝ բացի քաղաքացիական և քաղաքական իրաւունքների կատարեալ հաւասարութիւնը, նաև կուլտուրական ազատ ինքնորոշման իրաւունք, այն է՝ տարբեր բարբառների և լեզուների գործածութեան կատարեալ ազատութիւն հասարակական կեանքում. ազատութիւն՝ հիմնելու և պահպանելու ուսումնական հաստատութիւններ և ամեն կարգի համախմբումներ, միութիւններ և հիմնարկութիւններ, որոնց նպատակն է պահպանել և զարգացնել ամեն մի ժողովրդի լեզուն, գրականութիւնը և կուլտուրան“։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ համաքաղաքացիական և ազգային ազատութեան պաշտպանութիւնը՝ ամեն տեսակ մանաւանդ վարչական՝ կամայականութիւններից, յանձնւում է նոր, ռամկավար հիմունքներով վերակազմուած դատարանին։

Միևնոյն ռամկավարական ոգով են ներշնչուած նաև կադետների ծրագրի այն մասերը, ուր խօսքը վերաբերում է պետութեան ֆինանսական քաղաքականութեան, բանւորական օրէնսդրութեան և ժողովրդական լուսաւորութեան։ „Անուղղակի հարկաւորութեան ընդհանուր նւազացումը և անուղղակի հարկերի ասիճանաբար վերացումը՝ ժողովրդական մասսաների սպառած ապրանքներից“. „ուղղակի հարկերի բարեփոխումը՝ եկամտային և ստացուածքային պրոգրեսիվ հարկաւորութեան հիման վրայ, ինչպէս և պրոգրեսիվ հարկերի ներմուծումը ժառանգութեան համար“. ապա „գործադուլների իրաւունք“, „բանւորական միութիւնների և համախմբումների ազատութիւն“, „օրէնսդրական ճանապարհով ութ ժամւայ աշխատանքի ներմուծում“, „բանւորական ընտրեալների մասնակցութիւնը՝ աշխատաւորների շահերը պաշտպանող օրէնքների գործադրութեան վերահսկող տեսչութեան մէջ“, „բանւորների պարտաւորիչ ապահովագրութիւն՝ պետութեան միջոցով՝ հիւանդութեան, դժբախտ պատահարների, ծերութեան և աշխատանքի անընդունակութեան դէմ“, „հաստատումն քրէական պատասխանատուութեան՝ աշխատանքը պաշտպանող օրէնքները խախտելու համար“, վերջապէս՝ „վերացումն՝ դպրոց մտնելու համար հաստատուած բոլոր սահմանափակումների, որոնք կապուած են սեռի, ծագման և կրօնի հետ“, „մասնաւոր և համայնական նախաձեռնութեան ազատութիւն՝ ամեն կարգի դպրոցական հաստատութիւններ բանալու և կազմակերպելու գործում, ինչպէս նաև դպրոցից դուրս տալիք կրթութեան ասպարէզում“, „դասաւանդութեան ազատութիւն“, „ներմուծումն ընդհանուր, պարտադիր և ձրի տարրական կրթութեան“—ահա կադետների պահանջները վերոյիշեալ հարցերի սահմանում։ Առանց աչառութեան կարելի է ասել, որ այս բոլոր պահանջները՝ թէ ըստ էութեան և թէ սկզբունքով՝ ոչնչով չեն տարբերւում ռուսական ծայրայեղ կուսակցութիւնների համապատասխան պահանջներից, այնպէս որ՝ այդ կողմից՝ կադետների դեմոկրատիզմը՝ կրկնում ենք, որևէ կասկածի և թիւր մեկնութիւնների տեղիք չի տալիս։

Նոյնիսկ հողային խնդիրը դնելու և վճռելու հարցում կադետները՝ ռամկավարական տեսակէտից՝ այնպիսի բարձր դիրք բռնեցին, որին դեռ չի հասել ոչ մի առաջադէմ—ի հարկէ ոչ սոցիալիստական—կուսակցութիւն Եւրոպայում։ Ցիշելիք, որ դումայում կադետները պնդում էին թէ՝ անհրաժեշտ է սահմանադրաբար յետ առնել մասնաւոր հողերը՝ աշխատաւոր գիւղացիութեան շահերը ապահովելու համար։ Այդ հողերը, կադետների կարծիքով, գիւղացիութեան օգտին գրաւած միւս բոլոր պետական, արքայական, կաբինետային և վանքապատկան հողերի հետ միասին՝ պէտք է մտնեն „պետական հողային ֆոնդի մէջ“, իսկ „այն սկզբունքները, որոնցով այդ հողերը պիտի յանձնւին կարիք ունեցող ազգաբնակութեան (համայնական կամ անհատական տիրում կամ շահագործում) պէտք է որոշւին՝ համաձայն հողատիրական և հողից օգտւելու այն առանձնայատկութիւններին, որոնք գոյութիւն ունին Ռուսաստանի զանազան շրջաններում“։

Ճիշտ է, նրանք կողմնակից էին, որ „պետութիւնը վարձատրէ այսօրւայ տէրերին արդար և ոչ շուկայի դնեռով“. ճիշտ է, նրանք խօսում էին ոչ թէ բոլոր մասնաւոր հողերի, այլ միայն „հարկաւոր չափով“ հողերի յետառման մասին. բայց չէ՞ որ մեր կադետների ռամկավարութեան աստիճանը որոշելու համար կարևոր է այն, որ նրանք հրնարաւոր են համարել կողմնակից լինել ստիպողական յետառման. իսկ այդ չէ՞ որ արդէն մի հարուած է „սեփականութեան սրբազան իրաւունքին“, մի տեսակ բացասումն մասնաւոր սեփականութեան սրբազան սկզբունքի՝ յանուն աշխատաւոր դասակարգի շահերի։ Ահա թէ ինչու յետադիմականները կադետներին անուանեցին „դիմակաւոր սոցիալիստներ“, ահա թէ ինչու հայրենիքի բոլոր հաւատարիմ սիւները սոնոց բարձրացրին և սկսեցին առատ արցունք թափել՝ պետութեան „անողոքոդ հիմունքների“ երերման առիթով, հէնց որ դումայում հարց դրուեց մասնաւոր հողերի ստիպողական յետառման մասին...

Ռամկավարներ լինելով հանդերձ՝ կադետները սահմանադրականներ են. նրանց կարծիքով ժամանակակից Ռուսաստանի համար պետական ամենայարմար կազմը՝ սահմանադիր-միապետական կառավարութեան ձևն է։ Այստեղ է արտայայտւում, ի միջի այլոց, այն „բէալ քաղաքականութիւնը“, որով այնքան պարծենում են նրանք. նրանց հասկացողութեամբ Ռուսաստանի դեռ չը նախապատրաստուած և քաղաքական մաքով անփորձ մասսաները տակաւին չեն հասունացել պետական կեանքի այն ձևերի համար, որոնք կապուած են հանրապետական կազմի հետ։ Եւ դրա համար է, որ „ռամկավար հանրապետութեան“ պահանջը, որը իբր նշանակ, մակագրուած է սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-յեղափոխականների ռազմադրօշմի վրայ, առաջ է բերում կադետների շրթունքների վրայ մի գիջող մեծամիտ ժպիտ, որով ուզում են ասել՝—դա մի օդային, ուտոպիական, և որ գլխաւորն է, „անքաղաքագիտական“ բան է, որովհետև չի համապատասխանում ռուս ժողովրդի ո՛չ հոգեբանութեան, ո՛չ էլ մտաւոր զարգացման։

Արդարադատ լինելու համար, սակայն, պէտք է ասել որ կադետներն իրենց ծրագրի քաղաքական մասով և՛ շատ առաջ են անցել ոչ միայն եւրոպական ազատամիտներից, այլ և եւրոպական հասարակութեան ուրիշ, աւելի արմատական, բայց ոչ սոցիալիստական տարրերից։ Ամենից առաջ նշանակալից է այն, որ նրանք ձգտում են կեանքի մէջ իրականացնել մի ժողովրդական ներկայացչութիւն, որը հիմնուած

* Կադետ բառը ծագում է K (կա) եւ D (դէ) տառերից, որ կոնստիտուցիոնալիստ-դեմոկրատ (սահմանադրական-ռամկավար) բառերի առաջին տառերն են։ Այդպէս է գործածւում՝ հակիրճ լինելու համար։ Նոյն նպատակով սոցիալ-դեմոկրատները կոչւում են էսդէկ (S էս եւ D դէ), եւ սոցիալիստ-ռեվոլիւցիոներները էսէր (S էս եւ R էր)։

է ընդհանուր ընտրողական սկզբունքի վրայ, առանց խըտրութեան կրօնի, ազգութեան և մինչև իսկ սեռի։ Ինչպէս յայտնի է, ընդհանուր ընտրական իրաւունքի սկզբունքը, ուղղակի, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ, դեռ չէ իրականացել սահմանադրական բոլոր երկիրներում։ Իսկ կանանց ընտրական իրաւունքի մասին լսել անգամ չեն ուզում քաղաքացիական ու քաղաքական հաւասարութեան այնպիսի դասական երկիրներ, ինչպէս Անգլիան և Շվեյցարիան։ Բայց դրանից՝ կադետները պնդում են, որ մինիմումը պէտք է ընտրի պարլամենտական մեծամասնութիւնից՝ որ նոյնպէս մի տեսակ pium desiderium է սահմանադրական քաղաքականութեան մէջ փորձուած այնպիսի երկրի համար, ինչպէս Գերմանիան է։ Վերջապէս կադետները այնքան բարձր են դնում ժողովրդի ներկայացչութեան իրաւունքներն ու իրաւասութիւնները, որ գերագոյն իշխանութեան համար շատ բան էլ չէ մնում։ Կարդացէք թէկուզ հէնց հետևեալ կէտը՝ նրանց ծրագրից. „Ոչ մի որոշում, կարգադրութիւն, յուցում, հրաման և դրանց նման ակտեր, որոնք չեն հիմնուած ժողովրդական ներկայացչութեան որոշումների վրայ, ինչ անուն էլ կրեն և ուժից էլ բղխեն նրանք, չեն կարող օրէնքի ուժ ունենալ"։ Միթէ այս ամենը չէ վկայում, որ գերագոյն իշխանութեան իրաւունքները minimum-ի են հասցրած։

Ինչպէս տեսնում էք, կադետների ծրագրի մեր քննած մասը ներշնչուած է ռամկավարական ոգով, որովհետև ձգտում է գրաւել ժողովրդի լայն խաւերը դէպի երկրի կարիքների հոգացողութեան գործը, և այդ ռամկավարութիւնը աւելի որոշ դոյնով երևան է գալիս տեղական ինքնավարութեան հարցում։ „Տեղական ինքնավարութիւնը պէտք է տարածուի ռուսական ամբողջ պետութեան մէջ —այսպէս է ասում կադետների ծրագրի կէտերից մէկը։ Իսկ մի ուրիշ կէտ ասում է, որ „տեղական (այսինքն քաղաքային և գաւառական) ինքնավարութեան օրգանների մէջ ներկայացչութիւնը... պէտք է հիմնուած լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութեան վրայ, առանց խըտրութեան սեռի, կրօնի և ազգութեան"*։

Աւելի կանգ առնել սահմանադիր-ռամկավարականների ծրագրի վրայ՝ մենք դտնում ենք աւելորդ. հիմնական կէտերը մատնանիշ արեցինք, և այդ արդէն բաւական է նրա էական առաւելութիւններն ու պակասութիւնները բնորոշելու համար։ Այդ ծրագիրը ո՛չ միայն արմատական է, այլ և ռամկավարական, այսինքն ներշնչուած է հոգատարութեամբ Ռուսաստանի ամբողջ ազգաբնակութեան էական շահերի մասին՝ ընդհանրապէս, աշխատաւոր խաւերի մասին՝ մասնաւորապէս։ Կադետների ծրագիրը շատ է տարբերւում եւրոպական այն ազատամիտ և յառաջադէմ (ոչ սոցիալիստական) կուսակցութիւնների ծրագրից, որոնք ապարդիկան յեղափոխութեան ժամանակ, և՛ նրանով, որ այդ ծրագրում զուտ քաղաքական բնոյթ ունեցող հարցերի կողքին խոշոր տեղ են գրաւում նաև հասարակական—տնտեսական հարցերը։

Չը նայած դրան, ծայրայեղ կուսակցութիւնները այդ ծրագիրը պէտք է համարեն անբաւարար և շատ կողմից թոյլ։ Մենք չենք էլ խօսում այնպիսի մանրամասնութեան մասին, ինչպէս օրինակ այն, որ կադետների ծրագրում չը կան ճիշտ ու միանդամայն վճռական ցուցմունքներ, թէ անհրաժեշտ է Ռուսաստանի առանձին ազգութիւններին կատարեալ իրաւունք տալ ո՛չ միայն կուլտուրական, այլ նաև քաղաքական ինքնորոշման՝ եթէ այդ ցանկալի երևայ ազգութիւններից որևէ մէկին։ Այստեղ խնդիրը մանրամասների մէջը չէ, այլ ծրագրի ընդհանուր ոգու։ Իսկ նրա ընդհանուր ոգին արտայայտում է մի տեսակ կիսատութիւն, որ արդիւնք է մտքի ինչ որ երկչոտութեան, քայլ առ քայլ մինչև վերջնական եզրակացութիւնները հասնելու երկիւղի։ Մարդիկ մինչև հասարակ զարդարանքի են հասցնում գերագոյն իշխանութեան իրաւունքները, և դրա հետ միասին, վախենում են արտասանել հանրապետութիւն բառը, ինչպէս նրանց աւելի և նուազ չափաւոր նախորդները քաշւում էին „սահմանադրութիւն" բառն արտասանելուց։ Գոնէ մտքի անվախութիւն սովորէին թէկուզ հէնց այն գերցէնից, որին այնքա՞ն սիրում են իրենց ուսուցիչը համարել և որը համարձակորէն ասում է. „Համաձայնեցէք մի անգամ ընդ միշտ, որ հանրապետութիւնը ազգերի ազատութեան անխուսափելի սկիզբն է. այդ առաջին քայլն է, առանց որի անհնարին է երկրորդը"։ Իսկ երկրորդ քայլը „սոցիալիզմն" է։ „Սոցիալիզմը, ասում է նոյն գերցէնը. ենթադրում է հանրապետութիւն, իբրև անհրաժեշտ անցած ճանապարհ, և հանրապետութիւնը հէնց այդ փոխանցն է միապետութիւնից դէպի սոցիալիզմը"։ Բայց բանն էլ հէնց այն է որ մեր կադետները նոյնքան քաշւում են խօսել սոցիալիզմի մասին, որքան և հանրապետութեան։—„Մենք ինքներս սոցիալիստներ ենք, պնդում են նրանցից մի քանիսը, բայց սոցիալիզմի մասին խօսելը՝ Ռուսաստանի համար դեռ էս անժամանակ է"։ „Մինչև ճիլը կը թրջի՝ հիւանդի հոգին կը թռչի"։ „Դա նիսիա բան է, իսկ մենք նաղդիեանից ենք ընկած"։—Սոցիալիզմը դեռ էս չը վճռած պրոբլեմ է, խորիմ սա կերպով ասում են ուրիշ կադետներ—Սոցիալիզմը անիրականալի ցնորք է, սիրուն ուտոպիա, ասում են ուրիշներ։ Եւ այդ բոլոր պնդումների մէջ, ամենալաւ դէպքում, մարդ դարձեալ զգում է մտավախութիւն, վախ՝ սեփական պահանջները մինչև նրանց տրամաբանական վերջակէտը հասցնելու, իսկ ամենավատ դէպքում... դա մի վախ է՝ իրենց դասակարգային առանձնաշնորհումների և շահերի համար, վախ՝ կազմակերպուած մասսաների ահարկու ուժի առջև, մասսաներ, որոնք զարթնում են՝ ազատօրէն ասելիք-գործելու նոր, անսովոր, մինչև այժմ չը փորձած կեանքի ձևեր։

Կադետները համարձակեցան պահանջել՝ մասնաւոր հողերի ատիպողական յետ առնելը, աշխատաւոր դիւղացիութեան անյետաձգելի կարիքները դոհացնելու համար։ Բայց անողոք ու խիստ հետևողականութեամբ իրենց պահանջները մղել հեռուն, մինչև ամբողջ հողի ազգայնացումը, կամ աւելի հեռուն՝ մինչև նրա համայնացումը—նրանք անզօր են. ինչ որ բան է պակասում նրանց մտքերին ու ոգուն...

Կադետները համարձակեցան խօսել ուժեղ բանւորական օրէնքի մասին, աշխատանքի պաշտպանութեան մասին, ընդդէմ անսիրտ շահագործման, քրէական պատասխանատուութեան մասին՝ աշխատանքը հովանաւորող օրէնքների խախտման դէպքում,—բայց անել դարձեալ մի վճռական քայլ մի քայլ որ արդարացնում է և՛ կեանքը, և՛ դիտութիւնը, և՛ տրամաբանութիւնը, դարձեալ մի քայլ՝ նոյնիսկ իրեն սեփական մտածողութեան շաւղով, միանդամ ընդ միշտ անցնել աշխատաւորների կողմը, հասկանալ որ դրամատիրական տնտեսութեան շրջանակի մէջ անհնարին է բանւոր դասի կատարեալ ազատագրումը, ներշնչուել սոցիալիզմի գաղափարներով և նուիրուել նրա ապառաւորութեան—ո՛չ, այս վեր է նրանց ուժերից, որա համար նրանց պակասում է և՛ մտքի և՛ գործի համարձակութիւն։

Այո՛... „գործի համարձակութիւն". կադետների շարքերը շատ են աղքատ յեղափոխական խառնուածքի տեր մարդկանցով, և դա ուժեղ հետք է թողնում ոչ միայն նրանց ծրագրի, այլ և ամենից առաջ նրանց տաքտիկի վրայ։— Իսկ կադետների տաքտիկի մասին միւս անգամ, երբ առիթ կ՝ունենանք խօսելու ուրիշ կուսակցութիւնների տաքտիկի մասին։

Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ

---

* Վերը բերած բոլոր հաղուածներն վերցրած են Վ. Իվանովիչի գրից՝ „Ռուսական կուսակցութիւններ, միութիւններ եւ լիգաներ", 1906, Պետերբուրգ։

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

ԺԲ

ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԷՆ

Gloria victis!

Մահակիր սիւները մթնշաղին մէջէն եղեռնաբար կը բարձրանան,
Պայծառ, սրտոտ և նուիրական արդիներուն համար արամաթախիծ Հայրենիքին,
Կարինէն Գաղատիա և Մարզուան և Պօլիսէն Իզմիր և Երիզայ...
Եւ ամէն անգամ որ արևակերպ հերոսի մը հոնդիւնը հովերուն մէջ մեռաւ,
Հեթանոս խուժանը կատաղօրէն վարն էր, հրապարակին վրայ, ցեխին մէջ և ցեխը ապականելով...
Եւ ցնծութենէ կ'սառնար Ալլահին հրաւէրէն և ատելութեան ծափերէն մրկեցին։

Բայց ո՞վ էր որ պիտի սղբար քու բարոյականդ, ո՞վ խաւարի և աւերի ժողովուրդ,
Դուն որ դահիճներուն առջև կը ծնրադրես և հերոսներուն համար պ՝ակ հիւսել չես դիտեր...
Ո՞վ պիտի սգայ քու անբերրի դարերուդ բարբարոս արշաւը Եղլոդաէն ի Հայաստան,
Ո՞վ պիտի կենցաղացնէ քու զործած աւերակներդ և դեղեցկութիւնները զոր փոշիացուցիր...
Եւ ո՞վ պիտի բերէ իտեապաշտութեան մրրկոտ ջահը, քու կեանքիդ ճանապարհին վրայ, հերոսաբար սարսելու...
Եթէ ոչ Հայորդին որուն յատակ մտածումը, Ընդմուտքին իդեալները ձեր դիմաց ապարդիւնօրէն ցոլացուց...
Եւ որուն արիւնը եկաւ նոյնիսկ Մարդկութեան բովանդակ Պատմութիւնը թրջելու...
Որպէսզի կարմիր լոյսը վերջապէս զձեզ թափանցէր, և դժխեմ սուրին տեղ ձիթենիին ճիւղը բռնէիք...

Ահաւոր անկիւնէ մը անդոհական թիարանին դուռը իր ծխնիին վրայ կը ճռնչէ...
Կիսամութին մէջ մահաձայն շունդ մը քարերուն վրայ դաժանօրէն կը դարբնուի
Եւ սուիններ և սուրեր կը մերկանան, և յիշոցներ ու նզովքներ ամէն դի,
Հսկաներ դուրս կաշտարակուին, անընկճելի և շքեղ և անվեհեր,
Իրենց ըմբոստի ուսերէն առ կախ երկաթները ազատարար զանդերու պէս մէկզմէկու ընդհարելէն...
Դէպի ստոյգ մահը կը քալեն, ցեղին ցաւովը ապառազէն և մօտաւոր մահէն զօրաւոր...
Եւ ահաւասիկ հրաշալի Ժիրայր, հայրենասարի Արամեանը և ռազմատիպար Պեսոն,
Ահաւասիկ Ծառուկեանը, Գալուստը, Գուրգէնը Տերսիմի փառաւոր քեռին և Խորէնն յաղթահատակ...

Ո՞վ գերագոյն եղբայրներ, առաւօտը քաղցրօ՞ւէն քաղցր է և ամենագութ աստղերը կը տարածամին...
Եւ երկնակամարէն ծորացող լոյսը, այսօր, ձեր հերոսի հոգեվարքին համար է սահմանուած...
Հիմայ հովեր պիտի անցնին տառապանքով հեծեծիւն, արիւնով կարմիր, մխիրով սպիտակ...
Հայրենիքէն փախչող հովեր պիտի անցնին, կարօտով, արցունքով և յիշատակով բեռնաւոր,
Եւ հողին տրամութենէն տրտում՝ տատրակները իրենց փետուրներուն շուշանը վար պիտի թափեն...
Եւ տարշաւ արծիւներ ձեր հերոսի մահդոյժը կատարէ կատար պիտի պատդամեն...
Մինչդեռ չարաշուք խուժանը վարէն, թերևս, մա՛հ պիտի որոտայ դաղափարի զոհերուդ...։

Եւ ահա կմախակերպ սիւներուն առջև կանդ առին, մահը ոսքերնուն տակ և հայեացքնին աստղերուն,
Եւ որոտումին պէս խօսեցան, իրենց բռունցքին մէջ կայծակներ ծրարած և բառերնուն հետ ապառաժներ շարժելէն..

—Նախ դո՛ւն յե՛տ թաւալէ, սարկութեան և չարիքի արիւնախում խուժա՛ն,
Դո՛ւն որուն բերանէն դեռ մեր ցեղին արիւնն է, որ աչքերնուս առջև վար կը կաթկթի...
Դո՛ւն որ մեր հացովն ես սնած ու մեր դարբնած սուրը մեր սրտին ուղղած...
Դո՛ւն որ քու անիմաստ դոյութիւնդ մեր կենսագործութեանը և մեր ճիգին կը պարտիս,
Դո՛ւն որ մեր աշխատաւոր բազուկին և մեր լուսաւոր ճակատին պտուղները քաղեցիր,
Դո՛ւն որ դաշտե՛ր մոխրացուցիր և մենք որ անխոնջօրէն զանոնք արշալոյներու վերածեցինք...
Դո՛ւն որ մահ սերմանեցիր և մենք որ ցեղվին դեղեցկութիւն և բարօրութիւն ծնցուցինք,
Դո՛ւն, բարբարոսութեան անխիղճ գործօն, յե՛տ քաշուէ՛, յե՛տ թաւալէ՛, յե՛տ խաւարուէ՛...
Թող մեր վերջին հայեացքը պայծառ մեռնի՝ մեր ոգեվարի գալարումին արժանի չես դուն...
Եւ դո՛ւք, դատաւորնե՛ր, դահիճնե՛ր, և դո՛ւն մեռելատիպ Մարդասպան,
Ըսե՛նք ձեզի, այս ժամը ձեր զարհուրանքի ժամն է, Հայրենիքին կողը նոր հերոսներու երկունքէն կը սարսռայ...
Այլ ևս օրենք չի կայ, ազատակամ ու խիզախ մահը, մահն է ձեր դարաւոր բռնութեան,
Կործանողներու կործանումը փոքրիկներու պէս, անչրպետներէն պիտի հանի պիտի դայ,
Միայն Գաղափարն է որ ո՛չ մահ ունի, ո՛չ դատաւոր, ո՛չ դերեզման և ո՛չ դագաղ։
Եւ հիմայ, զմեզ խեղդող չուանը մեզի տուէք, մեզի տուէ՛ք, դահճապետնե՛ր, դահիճնե՛ր,
Եւ կեցցե՛ն Ըմբոստները, կեցցե՛ն Ըմբոստները, կեցցե՛ն և կեցցէ՛ Հայաստան..."

. . . . . .

Հեթանոս խուժանը անհետացաւ ինչպէս դիականը պղնձէ հովերուն շունչէն հալածական,
Եւ անցնող զեփիւռները իրենց մայրական լացը լացին, անցնող թռչունները իրենց երգը երգեցին,
Անցնող ճառագայթները իրենց ոսկիէ պսակը և դափնին հիւսեցին,
Անցնող եղբայր և լուն և անիսօ հոգիները իրենց զարհուրելի վրէժները յղացան...
Ու ձեր մարմինները, ո՛վ Ահաւորներ, ո՛վ ճշմարիտներ, ով գերագո՛յն եղբայրներ,
Ձեր մարմինները օդին մէջ առկախ և ձեր մեծաբոց աչքերը հայրենի աստղերուն,
Օրերով և գիշերներով, երկու սիւներուն մէջտեղ քենայոյզ ճօճեցան և ճօճեցան,
Եւ ձեր վերջին խօսքերը, անտառին նման ուռճացաւ... „Կեցցեն Ըմբոստները և կեցցէ՛ Հայաստան..."։

ՍԻԱՄԱՆԹՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ԱՐԵԱՆ ԷՋԵՐ

ՏԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Լրացաւ տասն տարին Տամնամեայ տարեդարձը այն սև օրերի, երբ Համիդեան արիւնոտ թաթը՝ զազանային շարժուածքով՝ Հայկական կոտրածի հրամանն արձակեց, և տարափն ու աւերմունքը տարածեց դաւառներում, ուր ազատութեան ծիլը հազիւ էր արմատ դցել։ Աղետամարտի և տանջադրութեան այս տասնամեակին՝ արժէ վեր յիշել անցեալը, վերզգալ հանրաժողովրդական վիշտն ու մրմնջը, դարձեալ մի անգամ պատկերացնել տիրող բեժիմի ստեղծած չարիքն ու եղեռնը, անորակելի այլանդակութիւնը։

Անցեալը պէտք է յիշել՝ ապագան ստեղծելու համար։ Եւ այդ վերնագրի տակ, այս էջերում, մասամաս լոյս կը հանենք այն պաշտօնական նկարագրութիւնները, որոնք ազէտի վայրերից, 1895—1896 թուականներին, ուղարկուեցին Կ. Պոլսի պատրիարքարանին իբրև ճշգրիտ պատմութիւն, որպէս փաստերի և դէպքերի անպաճոյճ վերարտադրումն։

Այս՝ անգամ տպագրուող թուղթը այն թաղրիրն է, որ Մատթէոս Իզմիրլեան տուեց սուլթանի կառավարութեան, 1905 թուի դեկտեմբերի 4-ին, և որը մի մեղմ ամփոփումն է—անխուսափելի յատկանիշը բոլոր պաշտօնագրերի—ժողովրդական անսահման տանջանքի և կառավարական անարդ հալածանքների։

Վսեմափայլ Նախարար.

Անատոլուի կայսերական երկրին ծանօթ շատ տեղերու մէջ կատարուած քստմնելի և ցաւալի դէպքերն որպէսզի միանգամայն ընդ միշտ վերջ գտնեն և անդորրութիւնն ու ապահովութիւնը վերահաստատուի, ձեր վսեմութիւնը քափու քեհասի Աբրահամ էֆէնդիի միջոցաւ հրամայած էր, որ շրջաբերական կոնդակաւ պատուէր կարդամ հայոց, որ հանգիստ և հանդարտ մնան և այն կարգի դէպքերու առիթ տալէ զգուշանան։ Այդ առիթով թէպէտ և համարձակած էի 10 հոկտեմբերի 1895 և 243 համարաւ պարզել իմ տեսութիւնն և ներկայացնել իմ խնդրուածները, սակայն ձեր վսեմութիւնն այս անգամ ևս մեր ազգին երևելիներուն և ազգային քաղաքական ժողովոյ անդամ և ատենապետ Յովակիմեան Միհրան էֆէնդիի միջոցաւ, որ ձեր բարձր համակրանքը կը վայելէ, նմանօրինակ կոնդակի մը հրատարակութեան պէտքն զգացած ու կրկնած էր։

Նոյն ցաւալի դէպքերուն սկսուելէն ի վեր արձակուած և կրկնած այս հրամանն այնպէս ցոյց կուտայ, թէ Անատոլուի կայսերական նահանգաց մէջ հայոց վրայ ի գործ դրուած մարդասպանութիւնն ու հրձիգութիւնն, առևանգութիւններն և նորանոր բանտարկութիւններն, ինչպէս նաև կարգ մը եկեղեցեաց և վանքերու կողոպտելն, կրօնական սրբութեանց պղծելն և գիւղացի ժողովուրդի բռնի կրօնափոխութեան հրաւիրելն ևայլն, հայոց տեղի կամ առիթ տալէն յառաջ եկած են, թէ ասոնք չը պիտի դադրին, մինչև որ հայերը չը թողուն յեղուզակութիւնն և ապստամբութիւնն, և հաւատարմութեան ու հնազանդութեան շաւղին մէջ չը մտնեն և թէ, ինչպէս կը հրատարակի իսկ, ես կը թերանամ հրաւիրելու զանոնք ի հանդարտութիւն։

Վսեմափայլ Նախարար, ներում ինձ ըսել որ ձեր այս տեսութիւնն հայոց ազգին համար ընդհանրապէս և ինձ համար անհատապէս՝ անհանդուրժելի կերպով պատուոյ վիրաւորում յառաջ բերած է, ուստի հպատակութեան և հաւատարմութեան, պատուոյ պահպանման և արժանապատուութեան գիտակցութեան թելադրութիւնը հարկ կը դնեն իմ վրայ իմ վերոյիշեալ թաղրիրով ներկայացուցած նկատողութիւններն աստիճան մը ևս բացատրել։

Ազգի մը ընդհանրութեան խրատ խօսելու, ապդարարութիւն կամ յանձնարարութիւն մը ընելու համար, ինչպէս—ընդհանուր կանոն է այս—անկեղծութիւնը և ուղղամտութիւնը կը պահանջեն, խրատի ենթակայ եղողներուն նիւթապէս նոր զրկանք ու .վնաս, նոր վիշտ ու ցաւ յառաջ չը բերելու տեսակէտով՝ խղճի կատարեալ գոհացում ու համոզում գոյացած պէտք է լինի։

Ներեցէք ինձ, վսեմափայլ Նախարար, որ համարձակիմ յայտնել թէ խղճի սոյն գոհացումն, ինչպէս և համոզումն չը կրցի գոյացնել դժբախտաբար, ըստ որում Հայոց ազգը երկար ժամանակէ ի վեր Անատոլուի կայսերական նահանգաց մէջ՝ կենաց, ընչից, պատուոյ և արդարութեան վայելման ապահովութենէ գրեթէ բոլորովին զուրկ կը գտնուէր և որ շարունակ իր տառապանքն յայտնելով՝ գթութիւն կը խնդրէր, ինչպէս նկարագրուած է պատրիարքարանի կողմէ ձեր պաշտօնատան մատուցուած և անհետևանք մնացած բազմաթիւ թաղրիրներով։ Սեպտեմբեր 18-ի ցաւալի դէպքէն յետոյ՝ Անատոլուի կայսերական ծանօթ վեց նահանգաց և այլ տեղերու համար բարեբարումներ խոստացուելն լրագրաց մէջ հրատարակուելուն հետ՝ յիշեալ նահանգաց մէջ հայոց վրայ ի գործ դրուած մարդասպանութեան, բռնաբարման, ընչից աւարառման և տուներու ու խանութներու հրկիզման և վանքերու կողոպտման և բռնի կրօնափոխ ընելու եղեռնագործութեանց խժդժութեան մասին հետզհետէ ի պատրիարքարան հասած հեռագրեր և նամակներ՝ աստիճան մը ի յայտ կը բերէին գրեթէ բոլոր նահանգաց, գաւառաց, գաւառակաց և գիւղօրէից մէջ հայոց կրած անօրինակ և նմանօրինակ ազէտից մեծութիւնն ու դառնութիւնն։ Ուստի դարձեալ մի անգամ առաջ կը բերենք ի պատրիարքարան հասած հեռագրոց և նամակաց ամփոփումն։

Տրապիզոնի մէջ, տարւոյս սեպտեմբեր 20-ին չորեքշաբթի օրը, Վանայ Նախորդ կուսակալ Պահրի փաշայի և զինուորական հրամանատար փաշայի վրայ մէկ քանի ձեռք զէնք պարպուած և անոնք վիրաւորուած էին։ Սոյն եղեռնագործութիւնը հայոց վերագրելով և այսպէս հրատարակելով՝ տեղային թիւրք հասարակութիւնը հայերը կոտորելու նպատակով՝ յայտնի կերպով զէնքեր գտնելու և ձեռք բերելու կոչի։ Տեղական կառավարութիւնը՝ թէև գիտակ այս բանին՝ բայց արգելելու մասին տնօրէնութիւն մը չը ներ և մինչև իսկ կուսակալը տեղւոյն Առաջնորդական փոխանորդին և երևելեաց ազդարարել և զգացնել տուեր է, մինչև որ ոճրագործները ձեռք բերելով չը յանձնուին կառավարութեան, կարելի չպիտի լինի կոտորածի վտանգին առաջն առնուլ կատարելապէս, և ահա նոյն ամսոյ 26-րդ օրը տեղւոյն Թուրքերը սպառազինեալ՝

կը յարձակին Հայոց տուներուն, կրպակներուն ու խանութներուն վրայ. աւարի կուտան գրամ, ինչք և գոյք, որով տեղւոյն բոլոր դասակարգերը օրական հացի կարօտ վիճակի կենթարկուին։

Անձանց և ինչից կորստեան քանակութիւնը և սպանելոց թիւը խիստ շատ ըլլալով՝ կարելի չէ եղած տակաւին ճշտել։ Շատ մը հայեր բանտարկեր են, որոնց մէջ կգտնուի նաև նախորդ Առաջնորդական փոխանորդ Տէր Վահան քահանան։

Տրապիզոնի կոտորածն և աւարառութիւնը Սամսոնի և Պաֆրայի Հայոց անգորրութիւնը և ապահովութիւնը խանգարեց։ Կառավարութեան պաշտօնեայք փախցուած ծխախոտ փնտռելու պատրուակին տակ՝ շատ մը ծխախոտի գօրձիներու և ժանդարմներու հետ Հայոց տունները կոխած և խուզարկութիւններ կատարած են։ Հայոց ոմանց տան մէջ անձնապաշտպանութեան համար գտնուած զէնքերը հաւաքեր են. իսկ այս գործողութիւնը տաճկաց համար ի գործ չեն դրեր։

Տրապիզոնի շրջակայ գիւղօրէից հայերն ալ վերոգրեալ խժդժութեան ենթակայ եղած և թշւառութեան մատնուած են։

Կարնոյ մէջ հայերը զգալով որ տեղի թիւրքերը կը պատրաստուին զիրենք կոտորելու և իրենց ինչքերը աւարի տալու՝ երկիւղի և մտահոգութեան կը մատնուին։ Կուսակալութեան կողմէ, ոմանց միջոցաւ, ապահովութիւն կը տրուի. Հայերն վստահ կառավարութեան կողմէ տրուած այս ապահովութեան վրայ, կսկծին զբաղիլ իրենց գործերով, բայց հոկտեմբեր ամսոյ 18-ին Կարնոյ և շրջականերէն եկած սպառազինեալ թիւրքերը՝ յարձակելով մի քանի կողմերէ շուկային և հայոց թաղերուն վրայ, կսպանեն անզէն հայերը, ատնոց կիներն ու զաւակները և աւարի կուտան ինչքերը։ Կրակի կուտան և կայրեն այն տուները և խանութները, ուր հայերը կոտորածէ և աւարառութենէ զերծ մնալու համար գացեր և ապաւիներ էին։ Եւ այս պատճառաւ հայերէն ոմանք, ընդ որս և Տէր Գարեգին քահանան, մեռեր են, հրոյ ճարակ լինելով։ Կոտորածին ամենէն քստմնելին՝ պաշտօնատեղւոյն մօտերը տեղի ունեցած է։ Հոն հարիւրաւոր արհեստաւոր և վաճառական հայեր կսպանուին, որոնցմէ և ոչ մէկը կրնայ ազատիլ։ Թաւնիկ գիւղի Աբիկեան Տէր Եղիա քահանայն, իր եօթն ընկերօքն հանդերձ, կառավարութեան պաշտօնատան մէջ կը սպանեն. այս քահանայն և ընկերները նոյն գիւղի մէջ պատահած յարձակմանց և աւարառութեանց խնդրոյն համար եկած էին ի Կարին։ Թէ որքան մարդեր սպանուեցան և այրուեցան և թէ որքան դրամ՝ և ինչք ու գոյք վնասուեցան, կարելի չէ երևակայել։ Զինուորները փոխանակ արգելելու կոտորածն ու աւարառութիւնը, մասնակցած էին այս գործին։ Սպանելոց դիակներուն վրայ բացի դանակի և դաշոյնի հարուածներէ, տեսնուեր է և մարթինի հրացաններու գնդակի և սուինի վէրքեր։

Կարնոյ այս ցաւալի դէպքին վրայ 25 օր կանցնի և հայերն վստահ ըլլալով, որ կոտորածն ու աւարառութիւնը չը պիտի կրկնուի, դուրս կելնեն տուներէն, որոնց մէջ ապաստանած էին և մինչդեռ կը պատրաստուէին կրպակներն բանալու, նոյեմբեր ամսոյ 13-ին երկուշաբթի օր, թիւրքերը վերստին կը յարձակուին և 8 հայ կսպանեն և 20-ի չափ ալ կը վիրաւորեն։ Ասոնցմէ զատ անյայտ եղած հայեր ալ կան և սակայն չը գիտցուիր թէ ասոնք ողջ են, թէ մեռած։ Երկու կին ևս, կրած երկիւղնուն պատճառաւ, մեռած են։ Կոտորածն և աւարառութիւնը կրկնուած ըլլալով՝ հայերը վերստին ահ ու սարսափի կը մատնուին։

Կարնոյ մէջ աւերուած և այրուած կրպակներն ու խանութները թւով 10, իսկ աւարի տրուած տունները՝ 400 հատ են։

Կարնոյ նահանգին Բասէնլէր գաղայի 15 գիւղօրէից մէջ 785 տուն և մէկ վանք աւարի տրուած և հրոյ ճարակ եղած են, 129 հայ սպանուած ու 1000 ոչխար յափշտակուած են։ Բացի սոյն գիւղերէն՝ Պապա, Գոմաձոր, Իշխօ և Ատի-Վերան անուն գիւղերու հայերը, ցորեն և դրամ տալով յարձակողաց՝ կոտորածէ և աւարառութենէ զերծ մնացած են։ Վերոգրեալ վանքը որ կառուցեալ է յանուն սրբոց Աստուածածնի, կողոպտելէ վերջը կրակի մատնուեր է. վանահայր Արամեան Տէր Տիմոթէոս վարդապետն և վանքի մէջ գտնուող ութ այր և ինը կին մարդեր՝ սպանուեր են։

Կարնոյ նահանգին Պայպուրտ գաղայի և գիւղօրէից մէջ ևս յարձակում՝ տեղի ունենալով՝ շատ սպանութիւններ գործուած են։ Հոկտեմբեր 2-ին շատ մը սպառազինեալ լազեր և ասոնց հետ միացող թիւրքեր՝ կարգաւ կը յարձակին գիւղօրէից վրայ, և այր և կին մարդերէն և աղջիկներէն և տղաներէն շատերը կսպանեն և իբրև ոչխար կը մորթեն։ Ասոնք աւարառութեամբ և սպանութեամբ չը բաւականալով. եկեղեցեաց և վանօրէից վրայ ևս կը յարձակին ու քրիստոնէից համար ամենէն նուիրական բաները և սրբութիւնները կանարգեն, կպղծեն, կը խորտակեն և աւարի կուտան։

Հայերը Կարնոյ կուսակալին և չորրորդ բանակի հրամանատարին հեռագրով իրենց կենաց, պատուոյ և ընչից պահպանութիւնը կը խնդրեն, սակայն կոտորածն և աւարառութիւնը և աւերումը կշարունակուին։ Ցաճկաց և յունաց տուները հայոց տներէն զանազանելու համար՝ տանց վրայ զանազանիչ նշաններ տեսնուած են։

Պայպուրտի բնակիչները երբ կիմանան գիւղօրէից մէջ ի գործ դրուած խժդժութիւնները և կհասկնան, որ կարգը բաղաքին պիտի գայ, կը գոցեն իրենց կրպակները և կը փակուին իրենց տանց մէջ, սակայն երբ կը տեսնեն որ Երզնկայէն (չորրորդ բանակի կենդրոնատեղին) զօրքեր ղրկած են, վստահ և ապահով ըլլալով, կելնեն տուներէն դուրս. բայց երբ կը բանան իրենց կրպակներն ու խանութները, հոկտեմբեր ամսոյս 14-ին, տեղւոյն թիւրքերը արբունի զինուորաց յատուկ զէնքերով սպառազինեալ, և անդորրութեան պահպանման պաշտօնով եկած զինուորներէն արգելք չը տեսնելով՝ կը յարձակին, և մինչև երեկոյ հազարաւոր հայեր կսպանեն, աղջիկներ, հարսներ կը լլկեն և կառևանգեն, եկեղեցիները աւարի կուտան և Շապին-Գարահիսարի նախորդ առաջնորդական փոխանորդ Կիւրոյեան Տէր Խորէն վարդապետը կսպանեն։ Ոճրագործք

չը բաւականալով այդչափ եղեռներ գործելէ, շատ յղի կիներ վայրենաբար կմեռցնեն։ Պայպուրտի և գիւղերէից մէջ անձի և գոյից կորուստը ու վնասը խիստ շատ է, իսկ հապարաւոր մարդոց և անչափահաս տղայոց լացն ու կոծը սրտեր կը մորմոքեն։

(Վերջը միւս անգամ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՏԱԿԻԱԾՆԵՐ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ *

Սասունի 1904 յուլիսի կռիւներուն քննութիւն։

Ամենայն տեղ մահը մի է.
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի..

ՂԱԶԱՐ ՀԱՒԱՏՈՐԻԿՅԻ.—Քառասունհինգ տարեկան էր, ամուսնացած, հայր 4 տարեկան մի զաւակի. բարձրահասակ, ճերմկած մազերով, թիկնեղ, թեթեւաքայլ և հայդուկային կեանքի բոլոր նեղութիւններին համբերութեամբ տոկացող։

1898 թուից առաջ գնացել էր Ռուսաստան ապրուստ վաստակելու նպատակով։ Այնտեղ շփուում է յեղափոխական ընկերների հետ և իրացնում նրանց գաղափարները։ 1891 թուին Ճարտարի խմբի հետ, իբրև տասնապետ, երկիր է անցնում, միանում է Սերոբի խմբին և մասնակցում քրդերի և զրքերի դէմ եղած մի կարգ կռիւներում։ Սերոբի մահից վերջ, կառավարութիւնից իբրև յեղափոխական ճանաչուելով, պարտաւորուում է փախստական ապրել։ Աւելի ուշ՝ ընտանիքն ևս հետը վերցնելով՝ բնակութիւն է հաստատում Սասունում, և իւր համեստ ուժերը միացնում Անդրանիկի, Հրայրի և Վահանի գործունէութեան։ Սասնոյ մեծ կռիւների ժամանակ՝ Տալորիկի կողմերի պաշտպանութեան համար նշանակուած խմբի մէջն է գտնուում։ Ապա Տալորիկից փոխադրուելիս՝ Հոսնուտ գիւղի մօտ, մի պուրակի մէջ, մի քանի ընկերներով կռիւ է բռնում թիւրք զինուորների դէմ։ Կռիւ ժամանակ գնդակահար ընկնում է։

ՂԱԶԱՐ ԶՕՐՕԵԱՆ.—Շէնքբցի, 21 տարեկան։ Անգամ գիւղի հարուստ մի ընտանիքի՝ եռանդուն և կարիճ մի տղայ էր։ Շատ ոգևորուած էր Սասունում բուն դրած յեղաւորխականների ներկայութիւնից և շարունակ յարաբերութեան մէջ էր նրանց հետ։ Խմբերին օրերով հիւրասիրում է, պատսպարում և ճամբայ գցում։ Ոչ մի զոհողութիւն չէր կարողանում արգելել նրան՝ յարաճուն եռանդով փայփայելու յեղափոխութեան միտքը։

Երբ բռնկեց ապստամբութեան հրդեհը և սկսեց անհաւասար, օրհասական կռիւը Սասունցու և համիդիական բանակների միջև, նա ասպարէզ նետուեց իբրև հասարակ զինուոր և հայրենասէր երիտասարդի ամբողջ թափովը՝ մասնակցեց Լաճքանցիքի, Սէմալի և Գէլիէ—Գուզանի կռիւներին, որոնց մէջ ցոյց տուեց Սասունցուն պատիւ բերող քաջ ոգի։ Գէլիէ-Գուզանի կռուում նա էլ ընկաւ։

Իր մօր մին ու ճարն էր։ Սակայն կարիճի արիւնը բաւական չէր, կարծես, որպէսզի Թշնամին իր կատաղութիւնը ամբողջապէս թափած զգար։ Սոսկումը կատարեալ անելու համար հարկաւոր էին նաև անպաշտպան մօր և նորահարսի խողխողած մարմինները։ Կռիւներից յետոյ, երբ Ղազարի մայրը իր հարսի հետ ուզում էր Շէնքը վերադառնալ, ճանապարհին հանդիպում է թշնամի քիւրդերի։ Անկարելի է լինում քիւրդերից խոյս տալ։ Երկու սասունցուհիներն իրենց պատիւը անարատ պահելու համար, գրկում են իրար և մօտակայ գետը նետուում։ Երկու բոպէ վերջ գետի ալիքները իրենց յորձանքների մէջ առաջ էին քշում ինքնակամ նահատակների անշունչ դիակները...։

ՂԱԶԱՐ ՄՕՍՕԵԱՆ.—Շէնքբցի ռէս, 65 ամեայ, 94-ի յայտնի հերոս Գրիգոր եղբայրը, մի բազմանդամ ընտանիքի հայր։ Միջհասակ, լայնկեկ, խոժոռ դիմագծեր, լայն-ճակատ, առատ-բեխ, առոյգ-կարմիր դէմք, մեղմ և դուրեկան խօսուածք։ Համագիւղացիների համերաշխութեան կապն էր նա։ Մեծ հաւատք էր տածում յեղափոխութեան մասին։ Իրեն համար ամենից հաճելի ժամերը յեղափոխականների հետ խօսակցութեամբ անցկացրած ժամերն էին։ Քանի՜ քանի՜ անգամ դրանցից մէկին կամ միւսին իր մօտ է պահել երկար ու բարակ վիճաբանութեան համար թէ՝ ի՞նչ է Օսմանեան կառավարութեան մտադրութիւնը հայերի մասին, թէ նա ի՞նչ աչքով է նայում Սասունի վրայ մասնաւորապէս, թէ ի՞նչպէս պէտք է ժողովուրդը պատրաստել ինքնապաշտպանութեան համար, թէ արտասահմանի հայերը ի՞նչպէս և ի՞նչ կերպով կարող են ու պէտք է օգնեն երկրացիներին և այլն։ Կռիւների ժամանակ ոչ միայն գիւղացիներից խմբեր էր պատրաստում, խրախուսում և կռիւ ուղարկում, ոչ միայն կանանց խմբեր էր ճամբում՝ կրուողներին պաշար և ռազմամթերք փոխադրելու, այլ և գրեթէ բոլոր կռիւներին մասնակցում էր անձամբ, զէնքը ձեռքին, հակառակ իր ալևոր հասակին։ Կռիւներից յետոյ նա էլ, ուրիշների պէս, դաշտն է իջնում։ Մի ժամանակ Գոմերումն է մնում, ապա անցնում է Խորոնք գիւղ, ուր դաւաճանութեամբ սպանուում է թշնամի քրդերից։

ԳՐԻԳՕ ՍԻՆՕԵԱՆ.—Աղբեցի. 20 տարեկան, գիւղի յայտնի ընտանիքներից մէկի զաւակ։ Կարճահասակ, եռանդուն պատանի։ Տարիներ առաջ՝ երբ տակաւին փոքր էր, յաճախ ներկայ էր եղել Մուրատի՝ իւր հօր և եղբօր հետ ունեցած խօսակցութիւններին յեղափոխութեան մասին, որոնք իւր մատաղ սրտի մէջ վառել էին յեղափոխական գաղափարի առաջին կայծը։ Տարիների ընթացքում որքան հասունանում է իւր միտքը, նոյնքան աճում, արծարծուում է և այդ կայծը։ Երբ Մուշ ու Սասուն սկսում է նոր գործունէութիւն, կազմուում են հայդուկային նոր խմբեր, նրանց գլխաւոր ընդունող ու պաշտպանողը նա է լինում իրանց գիւղում. շատ անգամ էլ առաջնորդութիւն ու փոխա-

* Հրայրի եւ Վահանի մասին արդէն տպած է „Դրօշակի“ մէջ, նրանց նկարներով հանդերձ։

դրութիւններ է արել։ Համագիւղացիներ կամ բարեկամներ շատ անգամ խրատելիս են եղել նրան՝ ետ մնալ իւր ուղղութիւնից, շատ անգամ էլ սպառնալիքներ է լսել,—բայց միշտ ի զուր։ Քաջութեամբ մասնակցում է Գէլիէ—Գուզանի կռուին, որի մէջ ճակատից գնդակահար լինելով՝ մեռնում է։ Թշնամին իւր գաղանութեան մի նոր փաստ տալու համար, թնդանօթի բերանին է կապում նահատակի մարմինը ու պայթեցնում։

(Կը շարունակուի)

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Դաշնակցութեան Կովկասեան մարմինները որոշել են ջերմ մասնակցութիւն ընդունել Դումայի առաջիկայ ընտրութիւններին։

—

Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգի հայերի մի շրջան պատրաստում է մի աշխատութիւն ռուսերէն լեզուով, որի նպատակն է՝ պատմական փաստերով և պաշտօնական գրագրութիւններով ցոյց տալ Ցարի կառավարութեան բռնած անարդ դիրքը՝ դէպի Ռուսաստանի հայերը մասնաւորապէս, և դէպի հայոց հարցը՝ ընդհանրապէս։

—

Թիւրքայ-Հայաստանից վերադարձած մի եւրոպացի հետևեալ տպաւորութիւններն է հաղորդում. „Մօտիկից տեսայ հայ ժողովուրդը, որի մասին շատ բաներ էի լսել, և կրկնակի սիրեցի նրան։ Նա տոկուն է, աւելի քան մի այլ ժողովուրդ, սիրող եւրոպականութեան, թեքւած դէպի արևմտեան քաղաքակրթութիւնը։ Ցաւն տարուայ ծանր դէպքերը տանջել են նրան, դրոշմել նրա ճակատին անջնջելի կնճիռներ, բայց չեն կորցրել նրա հաւատը դէպի լաւ օրերը, նրա վստահութիւնը դէպի ապագան։ Նա ապառում է ազատութեան, և այդ նպատակով ոչինչ չէ խնայում ազատութեան մշակների համար։ Մի կոշտար, որ խեղդում է անօգնական ժողովրդին—անծայր, չը տեսնւած աղքատութիւնն է, որ ներշնչում է ամեն մի օտարականի անսահման ատելութիւն՝ դէպի այդ բոլորի պատճառը—դէպի տիրող բեժիմը։

—

Կովկասում կազմւած է մի նոր սև-հարիւրակ, „Կենտրոնական զինուորական մարմին՝ անունով, որի նպատակն է կռւել Դաշնակցութեան դէմ։ Ահա մի հատուած այն շրջաբերականից, որ նա հրատարակել է նորերս.

Ռուսական պետութեան մէջ անտանելի են սեպարատիստները, որովհետև նրանք տանում են պետութիւնը դէպի անկումն ու թուլութիւն։ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործունէութեան սկզբից արդէն՝ իրեն ցոյց է տւել իբրև այդպիսին, և այդ պատճառով նա պէտք է հիմքից կործանւի։ Ոչ մի խորամանկութիւն չէ կարող ստիպել մեզ՝ այլ կերպ մտածելու Դաշնակցութեան մասին,—նա սեպարատիստների կուսակցութիւն է, և հենց դրա համար՝ պէտք է ոչնչացնւի։ Ցայտնելով այդ մասին, „Կենտրոնական զինուորական մարմինը“ առաջարկում է իր բոլոր ճիւղերին՝ անմիջապէս խստագոյն կռիւ սկսել Դաշնակցութեան դէմ, կանգ չ՝առնելով ոչ մի միջոցի առջև՝ նախադրած ճանապարհին հասնելու համար։ Դիմադրութեան, վրէժի, կամ առհասարակ որևէ „միջոցի“ դէպքում, որ ձեռք կ՝առնի ինքը կուսակցութիւնը, կամ նրան համակրող ազգաբնակութիւնն ու առանձին անհատները, բացարձակ կռիւ սկսել նրանց դէմ, բռնանալ, նոյն իսկ ոչնչացնել, չը քաշւելով ոչ նրանց քանակութիւնից, և ոչ էլ նրանց հասարակական դիրքից։

„Կենտրոնական զինուորական մարմինը“ շարադրում է այդ ապառնալիքները, իսկ ստիկանութիւնը, իսկական սև-հարիւրակը, կոյր ու խուլ ձևացած՝ տարածում է այդ զառանցանքները։ Երանելի գործակիցներ...

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Կազմակերպական ազդ)

—

Հ. Յ. Դաշնակցութեան առաջիկայ Դ-րդ Ընդհանուր Ժողովի առիթով՝ նպատակայարմար դատւեց պաշտօնական օրգանի միջոցով անել հետևեալ ծանուցումը.

1) Ժողովի տեղի և ժամանակի մասին հարկաւոր տեղեկութիւնները կարելի է ստանալ Կենտրօնական մարմիններից, կազմակերպական ճանապարհով։

2) Նոյն Կենտրօնական մարմիններին է ուղարկւած «Օրակարգը», տարածելու ուր հարկն է։

3) «Օրակարգի» մէջ ցուցակագրւած բոլոր կէտերի վերաբերմամբ՝ մարմինները ու խմբերը, համաձայն մեր «Կանոնների», պէտք է տան իրենց ներկայացուցիչ-պատգամաւորներին մանրամասն ցուցմունք—հրահանգներ, չը մոռանալով փոքրամասնութեան կարծիքներն ևս, որպէսզի կուսակցաժողովի մէջ արտայայտւեն՝ մեծամասնութեան տեսակէտների հետ միասին՝ նոյնպէս և փոքրամասնութեան հայեացքներն ու տրամաղրութիւնները։

4) Բոլոր մարմինները հրաւիրւում են պատրաստել և ուղարկել լրացուցիչ դրամական հաշիւներ, որպէսզի Կազմակերպութեան 1904—1906 թւականի դրամական վիճակը պատկերացվի անթերի, իր ամբողջութեամբ։

5) Ժողովի քննութեան առարկայ պիտի լինի, «Օրակարգի» կէտերից դուրս, ինչպէս այլևայլ մարմինների, այնպէս և անհատ-ընկերների առաջարկները։ Հետևաբար նրանք, որոնք ունին այդպիսիները՝ պէտք է պատրաստեն վաղօրօք և ժամանակին առաջարկեն Բիւրոներին, Ընդհանուր Ժողովին ներկայացնելու համար։

6) Համաձայն «Օրակարգի» Գ-րդ յօդւածի, ընդհանուր ժողովը պիտի զբաղւի «կարգապահական և դրամական զեղծումների քննութեամբ»։ Այդ պատճառով՝ յատկապէս խնդրում ենք բոլոր մարմիններին, մանրամասնօրէն և անաչառութեամբ արձանագրել ամեն տեսակ զեղծումներ—դիսցիպլինային, կազմակերպական, թէ դրամական—և Բիւրոների միջոցով ներկայացնել Ընդհանուր Ժողովին, որպէսզի կազմակերպական բարձր ատեանի քննութիւնից չը վրիպի ոչ մի դէպք, ոչ մի փաստ, որը կարող է վնասել կարգապահական գործին, կազմակերպութեան առաջիկայ գործունէութեան և յեղափոխական գաղափարին։

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1906, նոյեմբեր.
Ժնեվ.

ԴԻՄՈՒՄ

—

Կովկասաբնակ տաճկահայ դաշնակցական ներկայացուցչական համագումարը, որ հաւաքւած էր «Կովկասեան նախագծի» շուրջը տարածւած խնդիրներն քննելու, ի միջի այլոց, քննութեան առնելով վերջին 4—5 ամսւայ ընթացքում մամուլի մէջ և զանազան խաւերում՝ յանուն տաճկահայ դատի մղւած պայքարը, որով իբր թէ պաշտպան են հանդիսանում մեր դատին, յայտարարում է.

1) *Որ դա հակայեղափոխական մութ տարրերի ագիտացիա է--զանազան մութ, ստոր, եսական նպատակների համար։*

2) *Որ այդպիսի մի ընթացք լոկ դաւանանական դիրք է տանկահայ դատի հանդէպ։*

Որ Դաշնակցութիւնը իբր հայ ժողովրդի արդար դատի միակ պաշտպան, այսօր էլ գործում է նոյն նանապարհով՝ ինչոր 16 տարուց ի վեր։

Համագումարը սրանով կո՛չ է անում ամբողջ հայ հասարակութեան և մասնաւորապէս Կովկասի դաշնակցականներին, զգոյշ մնալ այդ հակայեղափոխական տարրերից և նրանց պրոպագանդից։

ԿՈՎԿԱՍԱԲՆԱԿ ՏԱՃԿԱԿԱՑ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

30 նոյեմ. 1906.

Ա. Ջ. Դ.

Սրանով յայտարարում ենք, որ ծ ա ք ո ն ի նախկին խմբապետ Անդրանը իր 5 ընկերներով արտաքսուած են շրջանից, Կուսակցութեան պատկանող և իրենց մօտ գտնուած զէնք ու ռազմամթերքի մի մասը իւրացնելու և աւազակային նպատակներին ծառայեցնելու պատճառով։ Ասլանին և իր 5 ընկերներին ազդարարում ենք՝ անյապաղ վերադարձնել իւրացրած իրերը և հեռանալ շրջանից։ Հակառակ պարագային ծեռք կառնուեն խիստ միջոցներ։ Շրջանի ազբաբնակութիւնը հրաւիրւում է ապաստան չտալ այդ աւազակներին և ամեն կերպ աջակցել կազմակերպութեանը, նրանց բռնելու։

Հ. Յ. Դ.
Մ. Ք. Կ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏԻՊԱՐԹԻՆ

Արեւմտեան Պարսկաստանցի Է՝

Ռուսաստանից.—„Դրամ“ կոմիտէից 6000 մանեթ։

Վարչական Գործադիր. Կոմիտէ՝

1905 թ. ապրիլից մինչեւ 906 թ. յունուարի վերջը։ Զալլադ ա. խմբից նուէր 35 դանեկան, Կուռդ բ.-ի զէնքի դրամի մնացորդը 46, Ծայրերի գնից 10, Բարեբեր գիւղից նուէր 40, Իջեւան գիւղ. Արծիւ խ. 6, Նուէր յօգուտ բանտարկելոց 620, Ծախսած ձիու արժէքը 648, Մեծ Բ. Կարմիր խաչէն 270, Բարեբերի Արծիւ խ. նուէր 20, Զւարթի Լեւոնեդից 80, յօգուտ բանտարկելոց վիճակախաղից 400, եւս նոյն վիճակախաղից 554, Բաւոռ խմբից նուէր 33, Հով խ. 50, Թաջայոյս գիւղէն յօգուտ բանտարկելոց 110, Լեռնապոտից եւ շրջանից 210, Զւարթի Սեղրակից տուգանք 80, Պարանոցի Սամօյից տուգանք 20, Բամոսի գիւղերից տուգանք 530, Սամարայի շրջանից յօգուտ բանտի 100, Յոյս խ. 60, Արքուն խ. 16, Պերն խ. 40, Գիսակ խ. 22. 20, Բամոսի գոչերէն 45, Սարուսանի Կարմիր Խաչէն 216, Ծաղկոտի շրջանէն յօգուտ բանտի 452, Անյատակ գիւղէն 60, Բուրասանից կազմակերպական նուէր 112, Ստացած՝ Միներէք վնասելու համար Սասունցիների դրամը 492, Զինուոր Վարդանի դրամը 432. 25, Կոմայի արժէքից 25, Հակ խ. տուրքը՝ կազմակերպական 24, Զ-ակցի փոխանից տուգանք 540, Ամանից տուգանք 1080, Հեփթաղիմի թոռնիկից փոյտերի հատուցն 540, Բզնունեաց Ապառուչ գիւղէն 150, Ծառնոց գիւղէն 30, Մէջալզ 45, Վազանոց տուգանք 324, Բարեբերի Սամսոն խումբէն 40, Հոթայ խմբէն՝ կազմակերպական տուրք 20, Որսորդ ա. օժանդակ խմբէն 38, Զալլադ բ. խ. 30, Աղբիւր օժանդակ խ. 25, Անձնուէր խ. 25, Կայծակ խ. 10, Արածանի խ. 37. 20, Գրիչ խմբէն 40, Կուռդ բ. խ. 50, Ժայռ խ. 25, Գիսակ խ. 20, Մասիս խ. 15, Հսկայ խ. 24, Որսկան խ. (կուռդի օժանդակ) 25, Հակ խ. 27. 30, Մուկտ խ. 7. 20, Համբեր խ. 37. 20, Վարդանիկ խ. 20, Հրայր խ. 7. 20, Զալլադ ա-էն կազմ. տուրք 20, Որոս խ. 15, Արքուն խ. 22, Ադաս բ. խ. 43, Մենակներ խ. 20, Ծաղիկ խ. 12, Գիսակ խ. 8: Յօգուտ բանտի ստացած նուէրներ՝ տօների առթիւ: Նորակազմ խ. 40, Գուրգէն խ. 7. 20, Բարոմ խ. 14. 30, Պերն խ. 30, Գրիչ եւ իր օժանդակներէն 25, Նորածիլ խ. 40, Հրայր խ. 10, Անձնուէր խ. 15, Համբեր խ. 10, Նոյն խ-ի միջոցով նամակիրներէն 38, Անուշաւանից 20, Ծաղիկ խ. եւ նամակիրներէն 140, Զալլադ բ. եւ օժանդակներէն 27, Հսկայ խ. 40, Դրախտ խ. 10, Զոհող խ. 15, Որսորդ ա. խ. 10, Եւս բ. 10, Փոքրիկ խ. 10, Սերոբ-Աղբիւր խ. 80, պ. Գրիգորից եւ ընկ. 60, Ժայռ խ. 20, Կուռդ ա. խ. 25, Հով խ. եւ օժանդակներէն 45, պ. Միրզախանեանից 20, մի խումբ նամակիրներէ 25, եւս մի խումբ նամակիրներէ 16, Կայծակ խ. 11, Գիսակ խ. 10 Յոլակից 30, Արածուռնի խ. 37. 20, Զրջանակից՝ դիլտաի միջոցով 374, Շղթայ խ. 20, Վարդենիկ խ. 7, Վան-Վարդ խ. 10, Անձնուրաց խ. 10, Մենակներ խ. 30, Մայրիկից 5, Մելիք-Ասլանծատուրեանի միջոցաւ 54, Սեւան գիւղէն 55, Բամոս գիւղէն 150, Ս. Հեղինէ Արտոյտէն 108, Մասիս խ. 72, Անահիտ խ. 200, Բազէ խ. 10, Համակրէ մը 20, Բարեբեր գիւղի խմբերէն 79, Թաքուլի միջոցով 152. 20, Զամարի միջոցով 97. 10, Պ. Մ. 20, Թաքուլ խ. 51. 10:

Պարբանեան Գեղր. Կոմիտէ՝

ՌՈՒՍՕՈՒԹԻ ԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերից՝ Արաուլ 40 լէվ, Պեսօ 18, Շարէ (մնացորդ 1905-ից) 20, եւս 33, Մանուէլեան 22, Տէրոր 30, Բաբկէն-Սիւնի 30, Խրիմեան Հայրիկ 22, Թաքուլ Մալկարացի 17. 5, Հրայր 23, Բաշօ 12, Կանանց Կարմիր Խաչի Մարօ 212, 20, Սոմովի ս.—Հեռեւեալ խմբերից՝ Արկած 31, Արծիւ 32, Անդրանիկ 31: Սվիշտով.—Հեռեւեալ խմբերից՝ Կայծակ 25, եւս 22, Առիւծ 30, Վառօղ 11: Ճիւրճավայ.—Մոկուն խ. 23 լէվ: Գումար 684, 70: Հանգանակութեան արդիւնք 1707, 50 լէվ հետեւեալներէն՝ Վազ. Գոյ. 50 լ., Ռուբ. Գոյ. 40, Ս. Փափի 10, Գ. Մ. 5. Ս. Յովհաննէս 5, Գր. Պետր. 15, Յ. Դ. Յ. 10, Անդր. Փափ. 10, Յ. Դաւ. 5, Գ. Պ. 1, Ռ. Թոր 10, Մ. Ե. Գ. 5, Վրդ. Սաֆ. 10, Մ. Պ. 5, Պ. Մ. 4, Յ. Բ. 2, Ա. Մ. Դ. 2, Յ. Ս. 1, Յ. Մ. 5, Ա. Զ. 1, Ե. Պ. 1. Բ. Զ. 10, Բ. Ն. 3, Ս. Պ. 2, Յ. Ե. 3, Յ. Յ. 5, Ա. Ա. 5, Ոմն 15, Յ. Ա. 5, Ոմն 5, Ա. Սօլ 2, Արծիւ 10, Տիկին Թ. Ա. 15, Յ. Ցակ. 2, Ծեփարար 50, Գ. Ն. 150 մր. № 11420՝ 200, Տէրտէր 50 մր., Ե. Բ, 50, Ծ. Խ. 50. Յ. եւ Մ. 25, Ե. Թ. Բ. 50, Ն. Ս. 6, Պ. Ս. 5, Գ. Մ. 10, Վ. Ս. 1, Պ. Յ. 5, Առիւծ 100, Յ. Թ. 2, Յ. Դ. 3, Մ. Պ. 10, Տ. Բաշ. 10, Լ. Մ. Ս. 60, Խ. Մ. 5, Կ. Փ. 15, Յ. Մ. 2, Ե. Ա. 10, Ա. Բ. 10, Յ. Մ. 60 մր. Տ. Մ. 10 մր. Պինպաշի 10, Պզտիկ 10, Հանի աղա 5, Ե. Յ 20, Մարս. 5, № 11786՝ 200, Հ. Հ. 70 մր. Թ. Կ. 5, Ապազա 5, Շէմ, 2, № 11280՝ 10, Մ. Տ. 5, Մասիս լեռ. 5, Մաքսուս 1, Մ. Ս. 1, Աշնի Բենիկ 1, Ղ. Յ. 5, Մ. Յ. 5, Գ. Ս. 2, Յ. Տ. Ղ. 1, Ա. Ն. 1. Գ. Գ. 1, Խ. Խ. 1, Կ. Տ. 5, Ա. Գ. 1, Ա. Գ. 3, Խ. Գ. 2, Օ. Մ. 5, Արծիւ 2, Պ. Տ. 2, Յ. Խ. 1, Ս. Պ. 1, Կ. Ս. 1, Մանուկ 2, Մ. Մ. 3, Ոմն 5, Պաս. Շ. 3, Յ. Ա. Տ. 1, Ոմն 1, Յ Պ. 1, Կայծակ 1, Ս. Գ. 2, Ա. Կ. 2, Գ. Է. 2, Մ. Յ. Զ. 2, Ա. Կ. 2. Խ. Մ. 1, Յ. Պ. 2, Յ. Խ. 1, Ա. Ա. 1, Ե. Կ. 50 սանթ., Գ. Ա. 1, Ա. Խ. 2, Խ. Ե. 1, Հրացան 1, Թ. Գ. 2, Կ. Մ. Ս. 1, Ա. Թ. 1, Բարեբեր 1, Կ. Մ. 1, Գ. Վ. 2, Ա. Բ. 3, Հ. Խ. Մ. 2, Ռ. Խ. 2 Ա. Շ. 2, Մ. Օ. 2, Ա. Գ. 2, Ս. Մ. 2, Ա. Ղ. 5, Ա. Վ. 5. Ա. Գ. 1, Մ. Պ. 1, Պ. Խ. 2. Բ. Ղ. 1, Ա. Վ. 1, Մ Պ. 1, Ա. Զ. 1, Ս. 1, Ն. Մ. 1, Խ. Ա. 1, Յ. Տ. 1, Կ. Ս. 1, Օնանիկ 2 լէվ: Համագումար 2392 լէվ 20 սանթիմ:

ՎԱՌՆԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—Ամ 20 լէվ, 20 սանթ. Վ. Ա.-ի ձեռամբ խնոյնի մէջ նատուած 102 լէվ, Փոքրիկ խումբ ամսավճար 32 լէվ, նոյն խմբի ձեռամբ ի նպաստ բանտարկեալներու 50 լէվ, Վրէժ խումբ 20 լէվ, Շուշան խումբ 13 լէվ, Վրէժ խումբ 18 լէվ: Գումար 235 լէվ 20 սանթ.:

ՖԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷ.—Վրէժի Ա. Տասնեակ 57 լէվ, հետեւեալ խմբերից Վազգէն 60, Ֆէդայի Թ. Փոզարճի 21, Բաբկէն-Սիւնի 36. Վարդէս 45, Անձնուրաց Գայանբի 45, Շմաւոնեան ի Պորիսովկրաս 75, Տէրոր 26, Արեւելեան 14, Արարատ սրճարանի գանձանակէն 38, Դաշտային հանդէսէ ի նպաստ բանտարկեալներու 174. 10, Լսարանի գանձանակէն 3 լէվ: Գումար 598 լէվ 10 սանթ.:

Ընդհ. գումար 3225 լէվ եւ 50 սանթիմ:

Ոսկեհատի Կոմիտէ՝

Կարս 2734 դրամ, Խիզան 82. 5, Բոյր 20, Վազգէն 20, Հուրեկաթէն՝ Յոլ 75, Վարինակ 19, Հայկ 16, Թղթախաղէ 9, Ոմն 3, Ամրոց խմբի վիճակահանութիւնէ 82, Գուրգէն 18, Սուսան 4, Թ. Յ. 6, Մ. Օ. 2, Մարօ 1, Նարկիզ 1, Տանուտէր 190, Զատկական հանգ. 211: Գումար 3493. 5 դր. ոսկ: